

**Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր  
ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողով**

**Ընտրական օրենսդրության բարեփոխումների  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ՆԱԽԱԲԱՆ .....	2
1.1. Ընտրական փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորումը .....	3
1.1.1. ՀՀ կառավարության ծրագիր .....	3
1.1.2. Միջազգային կազմակերպությունների առաջարկություններ .....	4
2. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	6
2.1. Ընտրողների ցուցակներ .....	6
2.2. Նախընտրական քարոզչություն .....	8
2.3. Քվեարկության գործընթաց .....	12
2.4. «Օգնողների» ինստիտուտի կանոնակարգում .....	15
2.5. «Կարուսելային» քվեարկության կանխարգելում .....	16
2.6. Արդյունքների ամփոփում .....	17
2.7. Քվեարկության գործընթացի հանրային վերահսկողություն .....	19
2.8. Արդյունքների վիճարկում և բողոքարկում .....	20
2.9. Ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողություն .....	21
2.9.1. Դիտորդական կազմակերպություններ .....	21
2.9.2. Զանգվածային լրատվության միջոցներ՝ ՋԼՄ .....	22
2.10. Պատասխանատվություն ընտրախախտումների համար .....	23
2.11. Ընտրական վարչարարություն .....	24
2.12. Ազգային ժողովի ընտրակարգ .....	27
2.12.1. Կայուն մեծամասնության պահանջ՝ ի հեճուկս համամասնական ընտրակարգի .....	28
2.12.2. Քվեի կառուցվածքի և մանդատի հաշվարկման հետ կապված խնդիրներ .....	31
2.12.3. Երկրից դուրս գտվողների քվեարկություն .....	34
2.13. ՏԻՄ ընտրակարգ .....	35

## ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

### 1. ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 19-ի N 790-Ս որոշմամբ ստեղծված՝ ՀՀ վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով),

- գիտակցելով ընտրական ինստիտուտների և օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությունը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում ազատ և արդար ընտրությունների անցկացման, ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության վերականգնման, առավել ներառական ու ներկայացուցչական քաղաքական ինստիտուտների կայացման և երկրի հետագա ժողովրդավարացման նախադրյալ,
- փաստելով 2016 թ. 33 ընտրական օրենսգրքով սահմանված Ազգային ժողովի ընտրակարգի անարդյունավետությունը և ի թիվս պատճառների՝ նաև դրա հետևանքով ոչ ներկայացուցչական, հասարակության քաղաքական նախընտրությունները չարտացոլող խորհրդարանի ձևավորման և քաղաքական ճգնաժամի հասունացման գործում,
- նպատակ ունենալով բարելավել ընտրական վարչարարությունը, բարձրացնել նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը և վերահսկողության արդյունավետությունը, ներդնել ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշումների բացառման գործուն մեխանիզմներ, խթանել ընտրական գործընթացներում գաղափարների և ծրագրերի մրցակցությունը, ավելացնել բազմակի քվեարկության դեմ երաշխիքները, ապահովել քվեարկության գործընթացների մատչելիությունը, ապահովել ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը, բարձրացնել ընտրական վեճերի գործընթացների արդյունավետությունը, խրախուսել ընտրական ցուցակներում և խորհրդարանում կանանց ներգրավվածությունը, դյուրացնել և մատչելի դարձնել քաղաքական ուժերի՝ ընտրական գործընթացին մասնակցելու և խորհրդարան անցնելու պայմանները, ունենալ ընտրողների համար հասկանալի և կանխատեսելի ընտրակարգ,
- ղեկավարվելով կոլեգիալության, քաղաքական չեզոքության, թափանցիկության հրապարակայնության, ներառականության և մասնակցայնության սկզբունքներով,

մշակել է ընտրական օրենսդրության բարեփոխումների սույն հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ):

Հարկ է նշել, որ հայեցակարգը պատրաստվել է հրատապ ռեժիմով՝ առաջիկա արտահերթ խորհրդարանական ընտրություններից առաջ առաջնահերթ խնդիրների լուծումներ մշակելու և ազատ ու ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար որոշակիորեն բարելավված իրավական հիմքեր ապահովելու նպատակով: Հայեցակարգը ներառում է նաև որոշ առաջարկներ այն հարցերի շուրջ, որոնք թեև պակաս հրատապ են արտահերթ ընտրությունների կազմակերպման տեսանկյունից, սակայն կարևոր են և պետք է դառնան նորընտիր Ազգային ժողովի և դրա ձևավորած կառավարության՝ ընտրական հետագա բարեփոխումների անհետաձգելի օրակարգի մասը:

Հանձնաժողովի լիազորություններով և ժամանակային սահմանափակումներով պայմանավորված՝ հայեցակարգում տեղ չեն գտել այնպիսի փոփոխություններ, որոնք թեև առանցքային նշանակություն ունեն Հայաստանի հետագա ժողովրդավարացման, ավելի ներառական քաղաքական հաստատությունների ձևավորման և ընտրակարգի ներկայացուցչականության բարձրացման տեսանկյունից, սակայն պայմանավորված են Սահմանադրության արմատական փոփոխություններով:

Հայեցակարգում ներառված առաջարկությունների հիմքում ընկած են եղել ՀՀ կառավարության 2018 թ. ծրագիրը, նախորդ մի քանի ընտրությունների առնչությամբ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից տրված կարծիքները, ԵԱՀԿ ԺՀՄԲԳ-ի կողմից կազմված զեկույցները, դիտորդական կազմակերպությունների զեկույցները, խորհրդարանական խմբակցությունների կողմից քննարկված առաջարկությունները և սույն հայեցակարգի մշակման գործընթացում հանրային քննարկումների ու հանդիպումների ընթացքում (այդ թվում՝ արտախորհրդարանական քաղաքական ուժերի կողմից) ներկայացված և գրավոր ստացված առաջարկությունները:

Հարկ է նկատել, որ հայեցակարգում մատնանշված քրեական և վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի փոփոխությունների զգալի մասը հանձնաժողովի առաջարկությամբ արդեն իրականացվել է նախքան հայեցակարգի ընդունումը:

## **1.1. Ընտրական փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորումը**

### **1.1.1. ՀՀ կառավարության ծրագիր**

ՀՀ կառավարության 2018 թ. ծրագիրն արձանագրում է, որ Հայաստանում կառավարման և վստահության համակարգային ճգնաժամը մեկնարկել է այն պահից, երբ հիմք է դրվել ընտրողների ազատ կամարտահայտմանը խոչընդոտելու, քաղաքացիների կամարտահայտման վրա ապօրինի ազդեցություն գործադրելու, ընտրությունների արդյունքները կեղծելու արատավոր և կործանարար պրակտիկային: Կառավարությունն իր ծրագրում կարևորում է իրապես ազատ, արդար, թափանցիկ, ժողովրդավարական և հանրության կողմից չվիճարկվող արդյունքներ արձանագրող արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը, ինչի համար անհրաժեշտ է համարում ՀՀ ընտրական օրենսգրքի և ընտրական համակարգի էական բարեփոխումների իրականացումը: Այս առումով ՀՀ կառավարությունն իր ծրագրում առաջնահերթ է համարում իրականացնել հետևյալը՝

- Հրաժարվել ռեյտինգային ընտրական համակարգից և անցնել լիարժեք համամասնական համակարգի,
- Ձևավորել նոր՝ իրական պատկերն արտացոլող ընտրական ցուցակներ, որոնք հետագայում կթարմացվեն ինքնաշխատ եղանակով,
- Բացառել կրկնաքվեարկության հնարավորությունը՝ քվեարկած ընտրողների մատնահետքերի համաժամանակյա և ինտեգրված ստուգման ցանց ստեղծելու կամ համարժեք այլ եղանակով,
- Օրենքով երաշխավորել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին անվճար և վճարովի հիմունքներով տրամադրվող եթերաժամերի տեղադրումը ամենադիտվող ժամերին,
- Բացառել քաղաքացիների կամարտահայտման վրա ապօրինի ազդեցությունների գործադրումը, ճնշումներն ու ընտրակաշառքը: Այդ նպատակով իրավապահ համակարգում ստեղծել ընտրողների կողմնորոշման վրա ստիպողաբար կամ սպառնալիքներով գործադրվող ազդեցության, ընտրակաշառքների

և օրենքով արգելված նյութական նվիրատվությունների, ծառայությունների մատուցման, ապօրինի խոստումների և ընտրարշավի ապօրինի ֆինանսավորման դեմ պայքարի ստորաբաժանում,

• Իրականացնել ՀՀ ընտրական օրենսգրքի՝ ընտրողների ազատ կամարտահայտումը երաշխավորող այլ փոփոխություններ:

### 1.1.2. Միջազգային կազմակերպությունների առաջարկություններ

Ընտրական բարեփոխումների անհրաժեշտությունն ամրագրվել է նաև ընտրական հարցերով մասնագիտացած միջազգային և տեղական կառույցների, մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ եզրակացություններում ու հանձնարարականներում, որոնք արտացոլված են ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի տարբերակների վերաբերյալ կարծիքներում<sup>1</sup> և 2017 թ.՝ ԱԺ և Երևանի ավագանու ընտրությունների դիտորդական առաքելությունների ամփոփիչ զեկույցներում<sup>2</sup>: Դրանք, մասնավորապես, ներառում են հետևյալը՝

• արտերկրում գտնվող անձանց փոխարեն քվեարկության վերաբերյալ կասկածների փարատման նպատակով հնարավորություն ընձեռել արդյունավետորեն ծանոթանալ քվեարկության մասնակիցների ցուցակին՝ առանց անձի գաղտնիության խախտման,

• վերանայել կանանց ներկայացվածության քվոտան՝ ապահովելով նրանց արդյունավետ բաշխումը ընտրական ցուցակում,

• պարզեցնել քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների սահմանումը,

• ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից մասնակցությունը օրենսգրքի փոփոխությունների գործընթացում,

• ապահովել նոր տեխնոլոգիաների արդյունավետ և աստիճանական ներդրումը, ներառյալ՝ ձեռքբերումը, փորձարկումը, համապատասխան անձանց վերապատրաստումը և հանրության իրազեկումը,

• վերանայել հետընտրական կռախիցիայում ներգրավվող քաղաքական ուժերի թվի և ձևավորման ժամկետի սահմանափակումը,

• վերանայել կուսակցությունների և դաշինքների համար նախատեսված ընտրական տարբեր շեմերը,

• վերանայել արտահերթ ընտրությունների դեպքում թեկնածուների ցուցակների գրանցման համար փաստաթղթերի ներկայացման ժամկետները,

• նախատեսել վարչական ռեսուրսի չարաշահման ընդհանուր արգելք,

<sup>1</sup> <https://www.osce.org/odihr/elections/armenia/275511?download=true>  
<https://www.osce.org/odihr/elections/armenia/239591?download=true>  
[http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2017\)023-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2017)023-e)

<sup>2</sup> ԹԻՅԿ [զեկույց](#), 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրություններ, «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի [զեկույց](#) 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրություններ, «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի [զեկույց](#) Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրություններ, Ես Տեղական և տարածքային իշխանության մարմինների կոնգրեսի դիտորդական առաքելության զեկույցը (CPL33(2017)04 20 September 2017) <https://rm.coe.int/information-report-on-the-elections-to-the-council-of-elders-of-the-ci/1680750a5a>

- դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման համար նախատեսել ողջամիտ ժամկետներ, ներառյալ նաև ընտրությունների երկրորդ փուլի համար,
- քվեարկության արդյունքների աղյուսակավորման գործընթացի թափանցիկության մեծացման նպատակով ներառել լրացուցիչ միջոցներ:

## 2. ՀԻՄՆԱԽՆՊԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն գլխում ներկայացված են նախընտրական քարոզչության ընթացքում, քվեարկության օրը և հետընտրական ժամանակահատվածում տեղ գտնող և վարչարարությամբ պայմանավորված հիմնախնդիրները, դրանց շտկմանն ուղղված հնարավոր հեռանկարային գործողությունները և առաջնահերթ լուծումները: Վերջիններիս հարկավոր է անդրադառնալ հրատապ՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունների պատշաճ անցկացումն ապահովելու և ընտրողների ազատ կամարտահայտումն ու ընտրական գործընթացների օրինավորությունը երաշխավորելու համար:

Հարկ է նշել, որ ներկայացված հիմնախնդիրներն ու առաջարկությունները չեն սահմանափակվում միայն ՀՀ ընտրական օրենսգրքի իրավակարգավորումներով, այլև անդրադառնում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեական դատավորության օրենսգրքի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների<sup>3</sup> Ի լրումն ներկայացված առաջարկությունների՝ նաև անհրաժեշտ է վերացնել նշված օրենքների որոշ հակացությունների և կարգավորումների միջև առկա (օրինակ՝ ժամկետների) հակասությունները, որոնք հիմնականում առաջացել են 2016 թ. ընտրական օրենսգրքի ընդունումից հետո հարակից այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ չկատարելու արդյունքում, ինչի պատճառով իրավակիրառ պրակտիկայում առաջացած ընտրական վարչարարության շփոթը փորձել են լուծել ԿԸՀ պաշտոնական պարզաբանումների միջոցով:

### 2.1. Ընտրողների ցուցակներ

#### *Հիմնախնդիր*

Ընտրողների ցուցակների հետ կապված հիմնական խնդիրները վերաբերում են դրանցում տեղ գտած անճշտություններին, Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող անձանց անունների ներառման հիմքով դրանց հնարավոր չարաշահման հետ կապված ռիսկերին:

Վերջին տարիների համապետական ընտրություններին բազմիցս մտահոգություններ են արտահայտվել ընտրողների ուռճացված ցուցակների և բացակա ընտրողների փոխարեն քվեարկության հնարավոր ռիսկերի կապակցությամբ: Այսպիսի կասկածների փարատմանն ուղղված կարևոր լուծում է եղել քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը, ինչը 2016 թ. ԸՕ-ի նորամուծությունների շարքում եզակի լուծումներից էր, որ ընդունվեց քաղաքական և քաղաքացիական լայն կոնսենսուսի արդյունքում: Սակայն սրան զուգահեռ ՀՀ քրեական օրենսգրքում ներմուծվեց հակակշռման մի մեխանիզմ, ըստ որի քրեական պատասխանատվություն սահմանվեց այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու դեպքում<sup>4</sup>: Ընդ որում, քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ինչպես արարքը դիտավորությամբ, այնպես էլ անփութությամբ կատարելու դեպքերում: Այսպիսի կարգավորմամբ, ըստ էության, չեզոքացվեցին ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման մեխանիզմի կարևորությունը և կիրարկման հնարավորությունը, քանի որ պատժի սպառնալիքի տակ անձինք

<sup>3</sup> Հայեցակարգի ներկայացման պահին հայեցակարգին համահունչ փոփոխություններ արդեն իսկ արվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավորության օրենսգրքում:

<sup>4</sup> ԶԹՕ, հոդված 154.8

ենթադրաբար կարող են ձեռնպահ մնալ ուրիշի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դեպքերի մասին իրավասու ընտրական հանձնաժողով դիմելուց: Բացի այդ, հիշյալ դրույթը քրեաիրավական իմաստով ճիշտ չի ձևակերպված, քանի որ այդ արարքը չի կարող կատարվել անփութությամբ, այլ կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ, ինչն էլ ամրագրված է հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում:

Չնայած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակմանը, շարունակում է խնդրահարույց մնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, սակայն հանրապետությունից դուրս բնակվող անձանց անունների շարունակական առկայությունը ընտրացուցակում: Մի կողմից, այն պարունակում է ռիսկ՝ նրանց քվեների հնարավոր ապօրինի օգտագործման առումով, մյուս կողմից հիմք է տալիս անհարկի վարչարարության համար, այդ թվում՝ հանգեցնելով զգալի ավելորդ ծախսերի: Ընտրացուցակների ճշգրտման համար երկարաժամկետ առումով կարող են կիրառվել քվեարկության անցկացումը միայն նույնականացման քարտերի կիրառմամբ և/կամ նախագրանցումը: Այս լուծումները, թերևս, հարկավոր է քննարկել՝ հնարավորինս քիչ ծախսատար, բայց արդյունավետ եղանակով ապահովելու համար պատշաճ ընտրացուցակներ:

Ընտրացուցակների հետ անմիջականորեն չկապված, սակայն ընտրական իրավունքին վերաբերող մեկ այլ խնդիր է դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը: Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից առաջարկվում է վերացնել այն, սակայն դա սահմանադրական նորմ է և ներկայումս փոփոխության ենթակա չէ: Ավելին, անհրաժեշտ է սահմանադրական այդ նորմը սպասարկող օրենսդրական կարգավորում:

Գործող ԸՕ-ի իրավակարգավորման համաձայն՝ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ ընտրողին քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական սարքավորման մեջ առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ<sup>5</sup>: Անհրաժեշտ է արգելել ժամկետը լրացած անձը հաստատող անվավեր փաստաթղթով քվեարկությունը, ինչը հնարավորություն կտա կարճ ժամանակահատվածում վավեր անձնագրերով ապահովել ՀՀ այն սակավաթիվ քաղաքացիներին, ովքեր գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում և ընտրողների ցուցակից հեռացնել այն անձանց անունները, ովքեր վաղուց արդեն երկրում չեն բնակվում: Արտերկրում գտվող քաղաքացիների անունների ճշգրտման և այդ տեղեկատվության հիման վրա ընտրողների ցուցակների կրճատման հետ կապված այլ ճանապարհները առկա են, սակայն իրագործելի չեն կարճաժամկետ հեռանկարում:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Սահմանափակել վավերականության ժամկետը լրացած՝ անձը հաստատող փաստաթղթով քվեարկելու իրավունքը՝ ապահովելով վավեր անձնագրեր Հայաստանում գտնվող բոլոր ընտրողների համար և ցուցակներում թողնելով առնվազն վերջին մի քանի տարվա ընթացքում անձը հաստատող վավեր փաստաթուղթ ունեցող ընտրողներին:

- Նախատեսել մեխանիզմ՝ դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձանց ընտրողների ցուցակից հանելու համար, հետագայում այս հարցին անդրադառնալով սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

- Ի լրումն ստորագրված ցուցակների, որպես կրկնակի ստուգման միջոց, առցանց հրապարակել տեխնիկական սարքավորումների միջոցով գրանցված մասնակիցների ցանկը՝ որոնման հնարավորությամբ առանց ընտրողների անձնագրային տվյալների:

<sup>5</sup> Ընտրական օրենսգրք, հոդված 66, մաս 2

• Ապաքրեականացնել այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ անփութությամբ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը, իսկ արարքը դիտավորությամբ կատարելու դեպքում մեղմել պատժամիջոցները՝ հավասարեցնելով այն սուտ մատնության համար նախատեսված պատժազափին:

## **2.2. Նախընտրական քարոզչություն**

Նախընտրական քարոզչության հետ կապված հիմնական խնդիրները հիմնականում առնչվում են ընտրողների կողմից իրազեկ ընտրություն կատարելու սահմանափակումներին, քարոզչության հավասար հասանելիությանը բոլոր ընտրողների համար և կուսակցությունների քարոզչության ֆինանսավորման թափանցիկությանը:

### ***Ընտրողի կողմից իրազեկ և ազատ ընտրության հնարավորություն***

#### *Հիմնասխնդիր*

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրողի կամքի ձևավորման և նրա ազատ կողմնորոշման համար կարևոր քարոզչական գործիք է թեկնածուների միջև բանավեճերի անցկացումը, որը, սակայն, հայաստանյան իրականության մեջ դեռևս չձևավորված մշակույթ է: Նախընտրական բանավեճերը հնարավորություն են տալիս ընտրողին համեմատելու մրցակցող քաղաքական ուժերին և կատարելու իրազեկ ընտրություն: Բանավեճերի, հատկապես հեռուստաբանավեճերի իրական ազդեցությունն ընտրողի ընկալման վրա անժխտելի է, ուստի այդ ինստիտուտի ներդրման և զարգացման համար անհրաժեշտ է օրենսդրական կարգավորում և պարտադիր նորմի առկայություն: Մասնավորապես, համապետական ընտրությունների դեպքում Հանրային հեռուստատեսության եթերում հեռուստաբանավեճերի կազմակերպումը կարելի է դարձնել պարտադիր՝ ներգրավելով ընդհուպ համամասնական ցուցակը գլխավորող առաջին անձանց: Ինչ վերաբերում է մյուս լրատվամիջոցներին, ապա վերջիններիս պետք է իրավունք վերապահվի անվճար վերահեռարձակել Հանրային հեռուստատեսության եթեր հեռարձակած հեռուստաբանավեճերը:

Նախընտրական քարոզչության առկա կարգավորումների համաձայն՝ Հայաստանի հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ անվճար եթերաժամանակ է տրամադրվում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին): Սակայն անվճար եթերաժամանակի տևողությունը խիստ սուղ է, իսկ հատկապես վճարովի եթերաժամանակից օգտվելու հնարավորություն չունեցող կուսակցությունների համար այն դառնում է միակ հնարավորությունն իրենց ընտրական ծրագրերը ներկայացնելու համար: Անհրաժեշտ է եականորեն ավելացնել այդ ժամաքանակը, ինչպես նաև ամրագրել կուսակցությունների նախընտրական ծրագրերը հանրային հեռուստատեսությամբ լուսաբանելու պարտադիր պահանջ՝ ապահովելով հավասար հնարավորություն քաղաքական ուժերի համար:

Այժմ ԸՕ-ով կարգավորված են վերգետնյա հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվամիջոցներով նախընտրական քարոզչության իրականացումն ու եթերաժամանակի վաճառքը: Սակայն վերջին տարիներին ոչ պակաս ազդեցություն ունեն առցանց և կարելային հեռուստատեսությունները, որոնք դուրս են կարգավորումից և, որոնց կողմից եթերաժամանակի վաճառքի կանոնակարգում չկա:

Ընտրողի կամքի ազատ ձևավորման և անարգել դրսևորման իրավունքը պաշտպանված է քրեական օրենսդրությամբ, և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքերում<sup>6</sup>: Սակայն

<sup>6</sup> 33 քրեական օրենսգիրք, հոդված 149.1



պատասխանատվության տեսակն ու չափը բավարար խիստ չեն, որպեսզի կանխարգելիչ նշանակություն ունենան և գերծ պահեն անձանց հակաիրավական վարքագծի դրսևորումից կամ հնարավոր իրավախախտումների կատարումից: Հատկապես, եթե արարքը որակյալ բնույթ է կրում, այսինքն՝ կատարվել է ծառայողական կամ այլ կախվածություն կամ պաշտոնական դիրքն օգտագործելով, կամ գուցորդվել է բռնություն գործադրելով և այլն, ապա այս դեպքերում պատժի տեսակն ու չափը անհրաժեշտ է խստացնել:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Օրենսդրորեն ամրագրել համապետական ընտրությունների ժամանակ Հանրային հեռուստատեսությամբ հեռուստաբանավեճերի կազմակերպումը՝ դրանցից առնվազն մեկը նախատեսելով կուսակցությունների համամասնական ցուցակի առաջին համարների մակարդակով, ինչպես նաև անվճար հնարավորություն տալով այլ լրատվամիջոցներին վերահեռարձակելու այդ հեռուստաբանավեճերը:

- Էապես ավելացնել Հայաստանի հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ անվճար եթերաժամանակի քանակը և նախատեսել կուսակցությունների նախընտրական ծրագրերի լուսաբանում:

- Կիրառել վերգետնյա հեռուստատեսությունների վրա տարածվող կարգավորումները նաև կաբելային և առցանց հեռուստատեսությունների նկատմամբ՝ հարգելով վերջիններիս բիզնես շահերը:

- Ապահովել զանգվածային լրատվության միջոցներով ոչ միայն քարոզարշավի, այլև ընտրություններին մասնակցող թեկնածուների, կուսակցությունների ու դրանց ծրագրերի առավել հավասար լուսաբանման կարգավորումը՝ հարգելով խոսքի ազատությունն ու բազմակարծության իրավունքը:

- Խստացնել քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքերում քրեական պատժի տեսակն ու չափը:

#### ***Քարոզչության հասանելիություն զինծառայողների համար***

##### *Հիմնախնդիր*

Ընտրողների կարծիքի ազատ ձևավորման և տեղեկացված ընտրության իրականացման համար կարևորագույն նշանակություն ունի քարոզչության հասանելիությունը բոլոր ընտրողների համար: Թեև ԸՕ-ի համաձայն պետությունը պետք է ապահովի նախընտրական քարոզչության ազատ իրականացումը<sup>7</sup>, սակայն կարգավորված չեն զինծառայողների շրջանում նախընտրական քարոզչության իրականացման, ընտրությունների հետ կապված հարցերի առնչությամբ նրանց իրազեկման ապահովման հարցերը: Սրա արդյունքում ընտրություններին մասնակցող կուսակցություններն ավանդաբար գտնվել են անհավասար պայմաններում, իսկ զինծառայողների ընտրությունը հաճախ ուղղորդվել է վերադասների կողմից:

Հարկ է ընդգծել, որ նախընտրական քարոզչությունը չպետք է նույնականացնել կուսակցական քարոզչության հետ, ինչն օրենսդրությամբ արգելված է գորամասերում, զինվորական հաստատությունների և կազմակերպությունների տարածքներում,<sup>8</sup> սակայն պետք է երաշխավորել ընտրողների իրազեկ ընտրության կատարումը՝ ապահովելով ընտրական գործընթացի և մասնակիցների մասին տեղեկատվության հնարավորին լայն տարածում, այդ թվում՝ զինծառայողների շրջանում: Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված փաստաթղթերով, օրինակ՝ Նախարարների կոմիտեի «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների վերաբերյալ» թիվ (2010) 4 հանձնարարականով<sup>9</sup> ամրագրվում են

<sup>7</sup> ԸՕ, հոդված 19, մաս 2

<sup>8</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ [օրենք](#), հոդված 15, մաս 8

<sup>9</sup> Եւրոպայի խորհրդի կոմիտեի, Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների վերաբերյալ հանձնարարական (2010) 4,

զինված ուժերի անդամների ընտրելու և ընտրվելու իրավունքներ, և պետություններին կոչ է արվում վերացնել զինծառայողների ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում, որն այլևս անհրաժեշտ չէ հետապնդվող նպատակին հասնելու համար<sup>10</sup>:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Ապահովել զորամասերում քարոզչության հավասար պայմաններ՝ ՀՀ պաշտպանության նախարարության միջոցով՝ առանց անցագրային ու գաղտնիության ռեժիմի փոփոխման: Մասնավորապես՝ սահմանել մեխանիզմներ զորամասերում պաստառներ փակցնելու և զինծառայողներին նախընտրական քարոզչությանը հեռուստատեսությամբ հետևելու համար:

#### **Ընտրակաշառքի կանխարգելում**

##### *Հիմնախնդիր*

Կուսակցությունների կամ թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության հավասար կանոնները պահպանելու օրենսդրական պահանջներից է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում բարեգործության արգելումը: Գործող ԸՕ-ի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Սակայն այդ ժամանակահատվածն ընդլայնման կարիք ունի և պետք է ընդգրկի ոչ միայն նախընտրական, այլ առնվազն դրան նախորդող որոշ ժամանակահատված ևս, օրինակ՝ ընտրություններ նշանակելու մասին իրավական ակտի ընդունման պահից:

Ընտրողների կամքի վրա ընտրակաշառքի միջոցով ազդելու հնարավորությունը կանխելու կամ բացառելու նպատակով անհրաժեշտ է նաև վերանայել իրավական հետևանքներ առաջացնող իրավակարգավորումները, քանի որ նախատեսված վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցները շատ մեղմ են և որպես զսպող մեխանիզմ չեն կարող ծառայել: Բացի այդ, խիստ անորոշ է ընտրակաշառքի համար վարչական կամ քրեական պատասխանատվության վրա հասնելու սահմանագիծը, քանի որ վարչական պատասխանատվությունը նախատեսված է այն դեպքում, եթե «արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ»<sup>11</sup>: Սա գործնականում լայն մեկնաբանման և տարաբնույթ կիրառման տեղիք է տալիս: Հաշվի առնելով ընտրակաշառքի հնարավոր մեծ ազդեցությունը ընտրողի կամքի դրսևորման վրա և այդ արարքների հանրային վտանգավորությունը՝ անհրաժեշտ է բացառել դրանց համար վարչական պատասխանատվությունը և խստացնել քրեական պատասխանատվության միջոցները:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Ամրագրել բարեգործության արգելքը ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումը ժամանակահատվածում:

- Քրեականացնել թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրողներին դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը)՝ ուժը կորցրած ճանաչելով ՎԻՎՕ 40□10 հոդվածը:

[https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805cf8ef](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf8ef)

<sup>10</sup> Նույն տեղում, կետեր 58-59

<sup>11</sup> ՎԻՎՕ, հոդված 40.10

• Խստացնել ընտրակաշառք տալու և ստանալու համար քրեական պատասխանատվության տեսակն ու չափը:

## **Նախընտրական ծախսերի թափանցիկություն**

### *Հիմնախնդիր*

Նախընտրական քարոզչության հետ կապված բոլոր ծախսերը պետք է կատարվեն նախընտրական հիմնադրամի միջոցներից:<sup>12</sup> Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով թեկնածուները բացում են նախընտրական հիմնադրամ՝ ԸՕ-ով սահմանված դեպքերում և կարգով,<sup>13</sup> ընդ որում՝ այս պահանջի չկատարումն առաջացնում է վարչական պատասխանատվություն:<sup>14</sup> Սակայն վարչական տուգանքի չափը որևէ կերպ պայմանավորված չէ ընտրությունների տեսակով՝ համապետական կամ տեղական, ինչի արդյունքում նույն 100-200 հազար ՀՀ դրամ տուգանքը կիրառվում է և՛ կուսակցությունների, և՛ ՏԻՄ թեկնածուների դեպքում, ինչն արդարացված չէ: Անհրաժեշտ է վերանայել և վարչական տուգանքի շեմը պայմանավորել ընտրության տեսակով և ընտրագրավի չափով:

Բացի այդ, հիմնադրամների հետ կապված ավելի կարևոր խնդիր է այն, որ գործող իրավակարգավորմամբ քարոզչության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված մի շարք ծախսեր (օրինակ՝ ընտրական շտաբների վրայի պաստառներ, տրանսպորտային միջոցների վարձակալում, վառելիքի ծախս, ընտրական շտաբների տարածքների վարձակալում, շտաբի աշխատողների վարձատրություն, համերգների, մարզամշակութային միջոցառումներում ներգրավված անձանց վարձատրություն և այլն) չեն ներառվում նախընտրական հիմնադրամում և չեն դառնում հրապարակման ենթակա՝ փաստացի վերահսկողությունից դուրս թողնելով նախընտրական ծախսերի զգալի չափաբաժինը՝ դրանով իսկ անիմաստ դարձնելով հավասար պայմանների ապահովման նպատակով սահմանված նախընտրական ծախսերի առավելագույն շեմը:

Հարկ է նշել, որ նախընտրական հիմնադրամով կատարվող ծախսերի ընդլայնման և դրանց հրապարակայնության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն ևս ներկայացրել է հանձնարարականներ իր՝ համապետական ընտրությունների<sup>15</sup> և սահմանադրական հանրաքվեի հետ կապված զեկույցներում<sup>16</sup> առաջարկելով փոխել քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգերը, տրամադրել մանրամասն ֆինանսական հաշվետվություններ, նախընտրական հիմնադրամի ԿԸՀ-ի աուդիտի արդյունքները տեղադրել ԿԸՀ-ի կայքում:

Գործող կարգավորումների համաձայն՝ արգելված է հանրային ռեսուրսների օգտագործումը քարոզչության նպատակով: Այս համատեքստում համատիրությունները, թեև օրենսդրության համաձայն չեն համարվում պետական կամ համայնքային մարմիններ և նրանց տիրապետության տակ (հիմնականում՝ վարձակալության իրավունքով) գտնվող գույքն ու միջոցները հանրային ռեսուրս չեն, սակայն դրանք կոչված են ծառայելու բազմաբնակարան շենքի սեփականատերերի կոլեկտիվ շահերին: Հետևաբար, այդ մարմինների զբաղեցրած տարածքների և այլ միջոցների օգտագործումը քարոզչության նպատակով պետք է արգելվի:

Նախընտրական ծախսերի վերահսկողությունն իրականացվում է ԿԸՀ աշխատակազմում գործող վերահսկիչ-վերստուգիչ ծառայության միջոցով, որը, սակայն, չունի բավարար միջոցներ և աշխատակազմ, ի վիճակի չէ արդյունավետ իրականացնել իր գործառնությունները, ուստի և դառնում է ձևական և միաժամանակ ԿԸՀ-ից կախված ինստիտուտ: Վենետիկի հանձնաժողովի կողմից հստակ հանձնարարական էր

<sup>12</sup> ԸՕ, հոդված 27

<sup>13</sup> ԸՕ, հոդված 26

<sup>14</sup> ՎԻՎ օր հոդված 40.3

<sup>15</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/91962?download=true>

<sup>16</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

ներկայացվել Վերստուգիչ հանձնաժողովի անկախության և արդյունավետության բարձրագույն համար, սակայն օրենսգրքում կատարված միակ փոփոխությունը ծառայության անկախության մասին նշումն է, որը որևէ գործնական փոփոխության չի հանգեցրել<sup>17</sup>: Այս կառույցի հզորացման վերաբերյալ առկա է նաև 02/04/2017 թ. խորհրդարանական ընտրությունների հետ կապված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականը, ըստ որի քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու համար վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը պետք է ունենա համապատասխան միջոցներ, տեխնիկական փորձագիտական ուժ և անկախություն<sup>18</sup>: Ապագայում անհրաժեշտ է վերանայել վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարգավիճակը՝ ապահովելու համար դրա արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ անկախությունը: Նաև հարկավոր է օրենսդրորեն ընդլայնել ծառայության լիազորությունները (օրինակ, կուսակցությունների կողմից օրենսդրության խախտումների դեպքում վարույթներ հարուցելու իրավասություն, նախընտրական հիմնադրամների միջոցով գնված ապրանքների շուկայական արժեքների որոշում ընդունելու իրավասություն և այլն)՝ ապահովելով բավարար իրավական լծակներով և ռեսուրսներով:

### *Առաջնահերթ լուծումներ*

- Ընդլայնել նախընտրական քարոզչության հետ կապված ծախսերի ցանկը, որոնք պետք է կատարվեն հիմնադրամից, և սահմանել հրապարակելու պահանջը:
- Վերանայել թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելու կամ նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելու դեպքում տուգանքի չափը այն սահմանելով տվյալ ընտրություններին առաջադրվելու համար «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ընտրական գրավի մեկ քառորդի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը:
- Արգելել համատիրություններին իրենց տիրապետության տակ գտնվող տարածքները տրամադրել ընտրական շտաբ օգտագործելու նպատակով:

## **2.3. Քվեարկության գործընթաց**

Քվեարկության օրը քվեարկության ընթացքի, ընտրողի ազատ կամարտահայտման վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող գործոններն են քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնելու կարգի չարաշահումները, զինծառայողների կաշկանդվածությունը, քվեարկության գաղտնիության խախտումը, քվեարկության վերահսկումը, այդ թվում՝ շղթայական քվեարկության («քվեաթերթիկների կարուսելի») միջոցով, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց առկայությունը, ընտրողների կուտակումները և ոստիկանության անգործությունը:

### **Տեղաշարժման և այլ սահմանափակումներ ունեցող ընտրողների քվեարկության ապահովում**

#### *Հիմնախնդիր*

Տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների մատչելիությունը հենաշարժական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակում ունեցող ընտրողների համար շարունակական

<sup>17</sup> [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2016\)031-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)031-e)

<sup>18</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>

խնդիր է, որի լուծման ուղղությամբ չկա որևէ երկարաժամկետ ծրագիր<sup>19</sup>: Խոչընդոտների մի մասը ենթակառուցվածքային (ֆիզիկական) է՝ բացակայում են թեքահարթակները անվասայլակների համար, մուտքերը նեղ են, քվեարկության սենյակները տեղակայված են շենքի երկրորդ կամ ավելի բարձր հարկերում և այլն: Խոչընդոտների մյուս մասը կազմակերպական է, այսինքն՝ քվեարկության սենյակը կահավորված է այնպես, որ անհնարին է դառնում անվասայլակով ինքնուրույն գրանցման սեղանին մոտենալը կամ քվեախցիկի դիրքի և բարձրության պատճառով՝ ինքնուրույն քվեարկելը<sup>20</sup>:

Երկարաժամկետ կտրվածքով անհրաժեշտ է, որ ԿՀ-ն սահմանի տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների մատչելիության որոշման կարգը, որը կարող է նախատեսել մատչելիության աստիճանների տարբերակում՝ հենաշարժական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակում (դժվարություններ) ունեցող անձանց համար: Կարգը պետք է նաև նախատեսի պատշաճ և հնարավորինս թիրախավորված հանրային իրազեկում այս ընտրողների մասնակցությունը խթանելու և նախօրոք ավելի մատչելի տեղամասի ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար: Առաջարկվում է, որ կարգը նախատեսի մասնակցային գործընթաց՝ հաշմանդամների խնդիրներով զբաղվող ՀԿ-ների ներգրավմամբ:

Այդ նպատակով ԿՀ-ն պետք է գույքագրի բոլոր տեղամասային կենտրոնները, ունենա քվեարկության սենյակների նկարագրերը և մշակի քվեարկության կազմակերպման և անցկացման պայմանները բարելավելու հեռանկարային ծրագիր, որը հնարավորություն կտա պետական և ՏԲՄ մարմինների հետ համագործակցելով փոխարինել քվեարկության համար առավել ոչ նպատակահարմար/պիտանի տարածքները, խթանել թեքահարթակների կառուցումը հանրակրթական ուսումնական հաստատություններում (ինչը համահունչ է ներառական կրթության քաղաքականությանը) և աստիճանաբար մեծացնել մատչելի տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների ցանկը:

Քվեարկությանը ինքնուրույն մասնակցելու հաճախակի հանդիպող խոչընդոտներից է թույլ տեսողությունը, որը հատկապես տարածված է տարեց ընտրողների շրջանում և հաճախ չարաշահվում է «օգնողների» ինստիտուտի միջոցով<sup>21</sup>: Նախկինում ԿՀի տրամադրված A4 չափի պլաստիկ խոշորացույցները (ոսպնյակները) բավականին արդյունավետ կերպով օգնում էին թույլ տեսողությամբ ընտրողներին ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, թեև խոշորացույցների կիրառումը տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից միատեսակ և հետևողական չէր, և որոշ դեպքերում ՏՀ նախագահները խոշորացույցների հնարավոր կորուստը կանխելու և ֆինանսական պատասխանատվությունից խուսափելու համար դրանք պահում էին և չէին տրամադրում ընտրողներին: Բացի այդ, նախորդ մի քանի համապետական ընտրությունների ժամանակ ԿՀի պատվերով պատրաստվել են քվեաթերթիկի կաղապարներ՝ կույր ընտրողների ինքնուրույն քվեարկությունն ապահովելու նպատակով, սակայն 2017թ. ԱԺ ընտրությունների ժամանակ դրանք հնարավոր չէղավ օգտագործել տարածքային 13 տարբեր ցուցակներ ունենալու պատճառով:

Քվեաթերթիկի (քվեաթերթիկների) նմուշը հաստատելու ժամանակ ԿՀ-ն պետք է հաշվի առնի ցածր տեսողությամբ ընտրողների՝ ինքնուրույն քվեարկելու հնարավորությունն ապահովելու վերաբերյալ օրենսդրական պահանջը: Այն պետք է սահմանի քվեաթերթիկի կաղապարի օգտագործման կարգը և ներառվի ՏՀ-ների ուսուցման ծրագրում: Առաջարկվում է նաև ՏՀ-ների համար մշակել

<sup>19</sup> «դիտարկված տեղամասերի 69 տոկոսը հասանելի չէր ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար», ԵԱԳԿ/ԺՅՄԻ-Գզեկույց, 2 ապրիլի 2017թ. Խորհրդրանակական ընտրություններ

<sup>20</sup> «Անկախ դիտորդ» հասարակական դաշինք, վերջնական [գեկույց](#), 33 Ազգային ժողովի ընտրություններ, 2017թ. ապրիլի

2

<sup>21</sup> Նույն տեղում

հաշմանդամություն ունեցող ընտրողների հետ հաղորդակցվելու հուշաթերթ՝ նպատակ ունենալով բարելավվել այս անձանց հետ բարեկիրթ շփվելու փորձառությունը:<sup>22</sup>

Համապետական ֆիքսված ցուցակով համամասնական ընտրակարգին անցնելու պարագայում ընտրողին բավարար է կարողալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հերթական համարը՝ ինքնուրույն քվեարկելու համար, այսինքն՝ նախընտրած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու համար: Դա անհրաժեշտ է ոչ միայն տեսողական խնդիրներ ունեցող, այլև հայերենին չտիրապետող ընտրողներին ինքնություն քվեարկության հնարավորություն տալու տեսանկյունից: Այս ընտրակարգին անցումը նաև հնարավոր է դարձնում քվեաթերթիկների կաղապարների կիրառումը կույր ընտրողների կողմից:

Վերը նշված առաջարկությունները ներկայացվել են հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից, ինչպես նաև բխում են Հայաստանի միջազգային պարտավորություններից<sup>23</sup>, որոնցով Հայաստանը հանձնառություն է ստանձնել հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հիմունքներով արդյունավետ կերպով մասնակից դարձնել քաղաքական և հանրային կյանքին:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Սահմանել ընտրատեղամասերի մատչելիության կարգը, կատարել ընտրատեղամասերի գույքագրում և ընտրություններից առաջ հրապարակել հենաշարժական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակում ունեցող ընտրողների համար մատչելի տեղամասային կենտրոնների ցուցակը:

- Հենաշարժական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակում ունեցող ընտրողներին հնարավորություն տալ ժամանակավոր հաշվառվել ԿԸՀ-ի կողմից հայտարարված՝ տեղաշարժման համար մատչելի, գտնվելու վայրի մոտակա ընտրատեղամասում:

- Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) վիճակահանությամբ տրված համարները և կուսակցությունների անվանումը քվեաթերթիկի վրա տպագրվում են այնպիսի մեծությամբ, որ ընթեռնելի լինեն թույլ տեսողություն ունեցող ընտրողների համար:

- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ն տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրում է քվեաթերթիկի կաղապարներ՝ կույր ընտրողների ինքնուրույն քվեարկությունը ապահովելու նպատակով:

#### **Զինձառայողների քվեարկության օրինականության երաշխավորում**

##### *Հիմնախնդիր*

ԸՕ-ը սահմանում է, որ զինձառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով<sup>24</sup>: Այս կարգավորումը, թեև միտված է ազատ կամարտահայտման համար անկաշկանդ միջավայր

<sup>22</sup> Ն մ ա ն պ ր ա կ տ ի կ ա գ ո Ր ծ ու մ է Վ ր ա ս տ ա ն ու մ , տե ս <http://electionreforms.ge/res/docs/saswavloprograma-Printsomx.pdf>

<sup>23</sup> ՀԱԻԿ-ի հոդված 29(ա)-ն պետությունների պարտավորեցնում է «ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան լիարժեք և արդյունավետ կերպով մասնակցել քաղաքական և հանրային կյանքին՝ մյուսների հետ հավասար հիմունքներով... ի թիվս այլոց, ապահովելով, որ քվեարկության ընթացակարգերը, շենքերը և այլ պայմանները լինեն համապատասխան, մատչելի և ... օգտագործողին հարմար»։ Համանման դրույթներ են պարունակում 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.3 պարբերությունը և 1991թ.-ի ԵԱՀԿ Մոսկվայի փաստաթղթի 41.1 պարբերությունը:

<sup>24</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 65, մաս 4

ստեղծելուն, սակայն, որպես կանոն, զինձառայողների քվեարկության ժամանակ քվեարկության սենյակում ներկա է (են) լինում վերադաս սպա (սպաներ): Ջինվորականներն իրենց ծառայության բնույթով գտնվում են հրամանատարական ենթակայության ներքո և քվեարկության սենյակում վերադաս սպայի գտնվելը կարող է զգաստացնող ազդեցություն ունենալ և կաշկանդել զինձառայողների ազատ կամարտահայտումը:

Ջինձառայողների քվեարկության հետ կապված մեկ այլ խնդիր է նրանց՝ քվեարկությանը մասնակցելու նկատմամբ վերահսկողության սահմանափակումը: Առկա իրավակարգավորումների համաձայն՝ զորամասերում հաշվառված ընտրողների թիվը, ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ ընտրական տեղամասերի, այն ընտրական տեղամասերի համարները և գտնվելու վայրերը, որտեղ քվեարկում են զորամասերում կազմվող ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողները, զորամասերում կազմվող ընտրողների ցուցակները հրապարակման ենթակա չեն և դրանցից քաղվածքներ չեն կատարվում<sup>25</sup>: Ջորամասերում կազմվող ընտրողների քվեարկության տեղամասերի համարները և գտնվելու վայրի գաղտնիությունը ընտրությունների հրապարակայնության սկզբունքի կոպիտ խախտում է և անընդունելի, քանի որ զինձառայող ընտրողների քվեարկության ընթացքը դուրս է մնալու հասարակական վերահսկողությունից՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Թերևս, կարելի է ձեռնպահ մնալ այդ տեղեկատվության պրոակտիվ հրապարակումից ԿԸՀ-ի կայքում, սակայն այդ ընտրական տեղամասերի համարները և գտնվելու վայրը պետք է հասանելի լինեն ընտրությունների մասնակիցներին, այդ թվում՝ դիտորդական կազմակերպություններին՝ ըստ նրանց դիմումի:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Ջինվորականների քվեարկության ընթացքում արգելել վերադաս սպայի գտնվելը տեղամասային կենտրոնում:
- Հրապարակել այն ընտրական տեղամասերի ցանկը, որտեղ քվեարկում են զինվորականները:

## **2.4. «Օգնողների» ինստիտուտի կանոնակարգում**

### *Հիմնախնդիր*

Թեև ըստ գործող իրավակարգավորումների անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի<sup>26</sup> դրա իրականացման պրակտիկան խիստ առաձգական է: Կան մտահոգություններ, որ գործի են դրվում «շրջիկ օգնողներ», որոնք տարբեր տեղամասային կենտրոններ են ուղեկցում տարբեր, հատկապես տարեց ընտրողների՝ «օգնելով» նրանց քվեարկել: Բացի այդ, խնդրահարույց է այն, որ օգնողի տվյալները պահանջվում է արձանագրել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնելուց հետո: Այսինքն, կարող է ստացվել այնպես, որ օգնողը մեկից ավելի անգամ նույն տեղամասում օգնել է ընտրողին քվեարկել, որից հետո բացահայտվել ու արձանագրվել է արդեն իսկ տեղի ունեցած ապօրինիությունը: Դիտորդական առաքելություններն արձանագրել են անգամ օգնելու իրավունք չունեցող անձի կողմից ընտրողին օգնելու դեպքեր, որպիսի փաստը պարզվել է քվեարկելուց հետո գրանցամատյանում գրանցվելիս<sup>27</sup>:

Անհրաժեշտ է սահմանափակել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու (քվեարկելու) հնարավորություն չունեցող ընտրողներին օգնողների շրջանակը և կանխարգելել անօրինականությունը՝ այլ

<sup>25</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 8, մաս 12

<sup>26</sup> ԸՕ հոդված 67, մաս 9

<sup>27</sup> 2017թ. խորհրդարանական ընտրությունների ԹԻՅԿ [գեկույց](#)

ոչ թե արձանագրել այն: Դրա մեկ հնարավոր լուծումն այն է, որ օգնողը լինի տվյալ տեղամասում հաշվառված անձ:

Բացի այդ անհրաժեշտ է ավելացնել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու (քվեարկելու) հնարավորություն չունեցող ընտրողներին օգնողների պատասխանատվությունը՝ կանխելու հնարավոր չարաշահումները, օրինակ՝ պահանջելով, որ նրանք ստորագրեն ընտրողի քվեարկությունը չբացահայտելու հայտարարության (պարտավորագրի) տակ: Այսպես, կարելի է ԿՀՀ-ի որոշմամբ փոխել տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանի ձևը, որտեղ կարձանագրվեն քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու (քվեարկելու) հնարավորություն չունեցող ընտրողին օգնողի տվյալները և օգնողի հերթական համարը տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Օրենսդրորեն ամրագրել, որ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու (քվեարկելու) հնարավորություն չունեցող ընտրողին իրավունք ունի օգնել միայն տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված մեկ այլ ընտրող՝ վերջինիս տվյալները նախապես գրանցելով ՏՀՀ գրանցամատյանում (պարտավորագրի ստորագրման հետ միասին):

## **2.5. «Քվեաթերթիկների կարուսելի» կանխարգելում**

### *Հիմնահիմն*

Քվեարկության կարգի խախտման ամենահին և դեռևս գործուն սխեմաներից է շղթայական կամ քվեաթերթիկների կարուսելային քվեարկությունը, որտեղ ընտրողի քվեարկությունը վերահսկվում է կողմնակի անձանց կողմից՝ ընտրողին տալիս է արդեն լրացված (քվեարկված) քվեաթերթիկ՝ պահանջելով տեղամասից դուրս բերել չլրացված քվեաթերթիկը: Ըստ տեղական դիտորդական առաքելությունների՝ 2017 թ. ընտրությունների ժամանակ, որպես վերահսկման եղանակ, կիրառվում էր չօգտագործված քվեաթերթիկների դուրսբերումը, ենթադրելով որ պակասող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկը պետք է լինի քվեատուփում:<sup>28</sup> Չնայած այդ ընտրությունների ընթացքում քվեաթերթիկները հատուկ հաշվառում պահանջող փաստաթղթեր չէին և քվեախցիկներում տեղադրված էին չօգտագործված քվեաթերթիկներ, սակայն բացառված չէ, որ որոշ ընտրողների համար քվեաթերթիկների դուրսբերումը խոչընդոտել է ազատ կամարտահայտմանը: Եղել են հրապարակումներ, որ ՏՀՀ-ների կողմից քվեախցիկներից պարբերաբար դատարկվող չօգտագործված քվեաթերթիկները պարկերով դուրս են բերվել տեղամասային կենտրոնից<sup>29</sup> և հաշվելու համար, թե որ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկներն են քիչ և, հետևաբար որ կուսակցությունն է առաջատար տվյալ տեղամասի քվեարկությունում: Զինձառայողների քվեարկության ժամանակ դիտարկվել է միանման գործողություն չօգտագործված քվեաթերթիկների հետ: Յուրաքանչյուր զինձառայող թողնում էր չօգտագործված քվեաթերթիկները քվեարկության խցիկում միասին ճմրթված մեկ գնդի տեսքով: Այսինքն, բացելով այդ ճմրթված քվեաթերթիկների գունդը և տեսակալորելով մեկ զինվորականին տրված քվեաթերթիկները՝ հնարավոր էր բացահայտել, թե ինչպես է քվեարկել զինձառայողը:<sup>30</sup>

Քվեարկության գաղտնիության բացահայտման մեկ այլ մեխանիզմ է քվեարկության ծրարներում այլ առարկաների տեղադրումը (տարբեր գույնի և ձևի թղթիկներ) և քվեարկությունը տարբեր գույնի գրիչներով կատարելը:

<sup>28</sup> <https://transparency.am/files/publications/1511343844-0-379811.pdf>

<sup>29</sup> <http://hcv.am/wp-content/uploads/2017/07/NA-report.pdf>

<sup>29</sup> <http://araratnews.am/sas-i-artakin-gceci%D5%9En/>

<sup>30</sup> 2017թ.-ի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններ, ԵԱԳ/ԺՅՄԻԳ Դիտորդական առաքելության վերջնական զեկույց, էջ 31, <http://hcv.am/wp-content/uploads/2017/07/NA-report.pdf> էջ 59



ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ ընտրություններն ու հանրաքվեներն անցնում են գաղտնի քվեարկությամբ: Հետևաբար, ընտրողի քվեարկությունը վերահսկելը «կարուսելի» կամ չօգտագործած քվեաթերթիկները ընտրողի կողմից դուրս հանելու միջոցով համարվում է քվեարկության գաղտնիության խախտում, որի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն<sup>31</sup>: Ընտրական օրենսգրքն ամրագրում է, որ ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Սակայն անհրաժեշտ է ընտրողի կողմից իր իսկ քվեարկության գաղտնիության պահանջի խախտումը քրեական օրենսգրքով արգելված արարքների շարքին դասել:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Աժ ընտրությունների համար սահմանել, որ քվեարկությունը կատարվում է նախընտրած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելով՝ առանց որևէ նշում կատարելու: Նույն կարգը սահմանել նաև հանրաքվեների և համայնքի ավագանու (համամասնական ընտրակարգով) ընտրությունների ժամանակ:

- Սահմանել, որ նշում, գրառում պարունակող քվեաթերթիկները և քվեարկության ծրարները, ինչպես նաև բացի քվեաթերթիկից այլ առարկա պարունակող քվեարկության ծրարները չեն հաշվարկվում (օրինակ՝ համարվում են անվավեր կամ չսահմանված նմուշի):

## **2.6 . Արդյունքների ամփոփում**

### **Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփում**

#### *Հիմնախնդիր*

Վերջին Աժ ընտրություններին տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում առավել տարածված խախտումներից են եղել կողմնակի անձանց ներկայությունը, կողմնակի անձանց միջամտությունը քվեաթերթիկների տեսակավորման և հաշվարկի գործընթացին, նույն կուսակցության երկուսից ավելի վստահված անձանց ներկայությունը, ինչպես նաև գտնվելու իրավունքը հավաստող վկայականը տեսանելի կերպով չկրելը<sup>32</sup>: Կողմնակի անձանց ներկայությունը տեղամասում կամ ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց կողմից տեղամասում գտնվելու կանոնները խախտելը երբեմն վտանգում է ոչ միայն ՏՀՀ-ի բնականոն աշխատանքը, այլև ազդում է տեղամասում քվեարկության կարգի օրինականության վրա, սակայն որևէ իրավական հետևանք այդ արարքների համար նախատեսված չէ:

Մինևույն ժամանակ եղել են դեպքեր, երբ արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք չեն կարողացել մուտք գործել տեղամասային կենտրոն ժամը 20:00-ից հետո, ինչը ԸՕ-ի 68-րդ հոդվածի առաջին մասի սխալ մեկնաբանության և ԿՀՀ համապատասխան պաշտոնական պարզաբանումը անտեսելու հետևանք է: Տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփումը ընտրական գործընթացի կարևորագույն փուլերից է, և առավելագույն թափանցիկություն ապահովելու համար անհրաժեշտ է ավելի հստակ կարգավորում ունենալ ընտրական օրենսգրքում, ինչը կբացառի կամայական մեկնաբանությունները, և անհարկի խոչընդոտներ չեն ստեղծվի այս գործընթացին դիտորդների, ՋԼՄ ներկայացուցիչների, այցելուների, թեկնածուների և վստահված անձանց մասնակցության համար:

<sup>31</sup> ՔրՕ, 155 հոդված

<sup>32</sup> 2017թ.-ի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններ, ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ Դիտորդական առաքելության վերջնական զեկույց, էջ 31

<http://hcav.am/wp-content/uploads/2017/07/NA-report.pdf> էջ 59

Տեղամասի արդյունքների ամփոփման նիստի համար քվարկության սենյակի կահավորանքի վերադասավորման արդյունքում շատ դեպքերում քվեաթերթիկների հաշվարկը տեսանելի չի դառնում տեղադրված տեսախցիկների միջոցով<sup>33</sup>: Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել տեղամասում տեղադրված տեսախցիկի տեսադաշտում հաշվարկի անցկացման պարտադիր պահանջը: Այս փոփոխությունները պետք է ընդգրկվեն ՏԸՀ ուսուցման ծրագրերում:

Անհրաժեշտություն կա օրենսդրորեն ամրագրել, որ տեսախցիկների միջոցով քվեարկության ընթացքը պետք է իրականացվի առնվազն այն ծավալով, ինչը տեղի ունեցավ 2017 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Սահմանել վարչական պատասխանատվություն տեղամասային կենտրոնում գտնվելու կանոնները խախտելու համար:
- ԸՕ-ով հստակ ամրագրել այն կարգավորումը, որ ժամը 20.00-ին քվեարկության սենյակը փակվում է միայն ընտրողների համար, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են անարգել մուտք ու ելք գործել ժամը 20.00-ից հետո: Սահմանել այդ իրավունքի իրացման ընթացակարգը:
- ԸՕ-ով ամրագրել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի հնարավորինս տեսանելի լինելու օրենսդրական պահանջը քվեարկության սենյակում տեղադրված տեսախցիկի միջոցով:

### **Տարածքային ընտրական հանձնաժողովներում փաստաթղթերի ընդունում և թափանցիկության բարելավում**

#### *Հիմնախնդիր*

Քվեաթերթիկի վավերականությունը հավաստող պարտադիր պահանջներից է տվյալ ընտրական տեղամասի համարով ինքնաստանձվող դրոշմանիշի առկայությունը: Մույն հայեցակարգով առաջարկվող փոփոխությունների ընդունման պարագայում քվեաթերթիկները կդառնան հատուկ հաշվառում չպահանջվող ընտրական փաստաթուղթ: Այս հանգամանքը հաշվի առնելով կարևորվում է ինքնաստանձվող դրոշմանիշների ավելի խիստ հաշվառումը և վերահսկողությունը:

Տարածքային ընտրական հանձնաժողովներն իրավունք ունեն տեղամասում քվեարկության արդյունքների սխալ ամփոփման կասկածներ ունենալու դեպքում իրականացնել ընտրական տեղամասի արդյունքների վերահաշվարկ<sup>34</sup>: Փորձը ցույց է տալիս, որ սեփական նախաձեռնությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները համարյա երբեք չեն իրականացրել ընտրական տեղամասի քվեարկությունների վերահաշվարկ անգամ այն դեպքերում, երբ, օրինակ, երկու հարակից ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները ի հայտ են բերել տրամաբանորեն անբացատրելի քվեների բաշխման տարբերություններ: Պատահականության սկզբունքով ընտրված ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացումը կանխարգելիչ գործիք կարող է լինել արդյունքների կեղծման դեմ՝ հատկապես այն դեպքերում, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և վերահաշվարկ պահանջելու իրավունք ունեցող մյուս անձինք քվեարկության արդյունքները կեղծելու համար գալիս են հանցավոր համաձայնության:

<sup>33</sup>2017 թ.-ի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններ, ԵԱԳԿ/ԺՅՄԻԳ Դիտորդական առաքելության վերջնական զեկույց, էջ 30

<sup>34</sup> Ընտրական օրենսգրքը, հոդված 50, մաս 7

Չնայած քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների սքանավորումը և հրապարակումը չափազանց կարևոր կանխարգելիչ գործիք դարձավ կրկնաքվեարկությունների դեմ, սակայն այդ ցուցակների ստուգումը և ուսումնասիրությունը չափազանց դժվար էր իրականացնել (սքանավորված մեծ ֆայլերում դժվար է գտնել համապատասխան ընտրողին): Քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները էլեկտրոնային եղանակով և որոնման հնարավորությամբ հրապարակելը անհամեմատ կհեշտացնի ուրիշի փոխարեն քվեարկելու հնարավոր դեպքերի ստուգումը բոլոր շահագրգիռ դերակատարների կողմից:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Ամրագրել, որ տարածքային ընտրական հանձնաժողով տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրական փաստաթղթերը հանձնելիս՝ կատարվում է տեղամասին հատկացված չօգտագործված ինքնաստանձվող դրոշմանիշների հաշվառում: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում ինքնաստանձվող դրոշմանիշների հաշվառման համար համապատասխան կարգը և ձևաթղթերը պետք է մշակվեն ԿՀՀ-ի կողմից: Ինքնաստանձվող դրոշմանիշները չեն դրվում ընտրական փաստաթղթերի «մեծ» պարկի մեջ:

- Ամրագրել, որ ԱԺ ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր տարածքային ընտրական հանձնաժողով պատահականության սկզբունքով ընտրում է երկու ընտրական տեղամաս և իրականացնում է դրանց քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

- Ամրագրել, որ ընտրողների գրանցման սարքերից ստացված տվյալների հիման վրա քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները էլեկտրոնային տեսքով և որոնման հնարավորությամբ տեղադրվում են ԿՀՀ\*-ի կայքում (առանց ընտրողների անձնագրային տվյալների):

### **2.7. Քվեարկության գործընթացի հանրային վերահսկողություն**

Քվեաթերթիկները հատուկ հաշվառում չպահանջող ընտրական փաստաթուղթ դարձնելը անարդյունավետ է դարձնում շրջայական քվեարկության մեխանիզմը կամ այլ եղանակով (օրինակ՝ քվեաթերթիկի լուսանկարում) վերահսկումը և ճնշումը ընտրողի ազատ կամարտահայտման վրա, քանի որ ընտրողը նախքան քվեատուփին մոտենալը հնարավորություն է ունենում կատարել իր ընտրությունը՝ առանց բացահայտելու քվեի գաղտնիությունը:

ԱԺ և համամասնական ընտրակարգով անցկացվող ՏԻՄ ընտրություններում քվեարկության ժամանակ գրիչների օգտագործման անհրաժեշտությունը վերանում է, ինչը նաև նշանակում է, որ վերանում է գրիչի գույնով պայմանավորված քվեի գաղտնիության խախտումը:

#### *Հեռանկարային լուծումներ*

- Օրենսդրորեն ամրագրել, որ ԿՀՀ-ն պետք է սահմանի քվեարկության ընթացքում քվեախցիկների ներսի արկղերից դատարկվող չօգտագործված քվեաթերթիկների հավաքման և պահպանման կարգը՝ բացառելով դրանց դուրսբերումը տեղամասային կենտրոնից, այդ քվեաթերթիկների հաշվարկը և տեսակավորումը:

- Նախաձեռնել ընտրողների գրանցման սարքերի միջոցով ընտրողների կենսաչափական նույնականացման համակարգի ներդրումը: Այս նպատակով կարելի է ԱԺ արտահերթ ընտրություններից հետո ընտրել երկու համայնք, ոստիկանության հետ համագործակցելով՝ իրականացնել նույնականացման քարտերի տրամադրումը համայնքի բոլոր ընտրողներին և փորձարկել ընտրողների կենսաչափական նույնականացումը ՏԻՄ ընտրությունների ժամանակ: Ընտրություններից հետո վերլուծել կատարված

աշխատանքը, ծախսերը, արդյունքները և կազմել ծրագիր՝ մինչև հաջորդ ԱԺ ընտրությունները կենսաչափական համակարգ ներդնելու համար:

## **2.8. Արդյունքների վիճարկում և բողոքարկում**

### *Հիմնախնդիր*

ՀՀ ընտրական օրենսգրքով խիստ սեղմ է բողոքարկման սուբյեկտների շրջանակը և արհեստականորեն նեղացված է բողոքարկման առարկայի շրջանակը: Դիտորդը չի կարող բողոքարկել ընտրական հանձնաժողովի այն գործողությունը կամ անգործությունը, որն անմիջականորեն չի առնչվում իր՝ դիտորդի իրավունքներին, բայց որը կարող է լինել ընթացակարգային կոպիտ խախտում: Բացի այդ, դիտորդն իրավունք չունի նաև վիճարկել իր դիտարկած տեղամասի քվեարկության արդյունքները: Մինչդեռ վստահված անձը, դիտորդը և հանձնաժողովի անդամը պետք է իրավունք և հնարավորություն ունենան բողոքարկելու իրենց տեղամասի ընթացակարգային խախտումները կամ խախտումներով ընթացող քվեարկության արդյունքները:<sup>35</sup>

Սահմանափակող բնույթ են կրում թեկնածուի և վստահված անձի կողմից վերահաշվարկի դիմում ներկայացնելու կարգավորումները, քանի որ օրենսգրքով նախատեսված է, որ վերահաշվարկի դիմում վերջիններս կարող են ներկայացնել, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչը բողոքարկման գործընթացի համար լուրջ խոչընդոտ է:

Ընտրական մի շարք խախտումներ առաջացնում են վարչական պատասխանատվություն՝ համապատասխան ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ վարչական դատարան դիմելու մեխանիզմի կիրառմամբ: Գործնականում քննության արդյունավետությունն առավել ակնհայտ կդառնար ուղիղ դատարան դիմելու հնարավորության դեպքում՝ առանց վարչական իրավախախտման արձանագրության առկայության, ինչպիսի մեխանիզմ արդեն իսկ առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

Բացի այդ, գործող ԸՕ-ի կարգավորման համաձայն՝ եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է եսկան ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է եսկան ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանի և դիմումատուի միջև համապատասխան ընտրական հանձնաժողովը միանգամայն ավելորդ օղակ է, ուստի անհրաժեշտ է վերանայել այս մեխանիզմը և տալ հնարավորություն անմիջապես դատարան դիմելու համար:

### *Առաջնահերթ լուծումներ*

- Վերանայել ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկելու ժամկետները, բողոքարկման առարկայի և սուբյեկտների շրջանակը

<sup>35</sup> Ավելի արդյունավետ քննություն երաշխավորելու համար բողոքների և դիմումների իրավական շրջանակները պետք է վերանայվեն: ԵԱՀԿ / ԺՅՄԻԳ Հանրաքվեի Փորձագիտական խմբի Վերջնական Ձեկույց 05.02.2016, Վարչավա <https://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

• Իրավունք վերապահել կուսակցություններին, թեկնածուներին և դիտորդական առաքելություն իրականացնող ՀԿ-ներին՝ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար հայցով դիմելու դատարան:

## **2.9. Ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողություն**

### **2.9.1. Դիտորդական կազմակերպություններ**

#### *Հիմնախնդիր*

2016 թ. ԸՕ-ով ակնհայտորեն թուլացվել են դիտորդի իրավունքներն ու երաշխիքները և իրավական պաշտպանվածության հիմքերը: Դիտորդների հավատարմագրման վերջնաժամկետ է սահմանվել քվեարկությունից առաջ 15 օրը՝ նախկինում 10 օրվա փոխարեն: Այս սահմանափակումն առաջացնում է խոչընդոտներ, քանի որ դիտորդական առաքելություններում հաճախ հենց վերջին պահին են տեղի ունենում փոփոխություններ: Մյուս կողմից, չեն բարելավվել նաև ԿԸՀ-ում դիտորդական կազմակերպությունների գրանցման գործընթացները, և դիտորդները ԿԸՀ վկայականները ստանում են չլրացված վիճակում:

Նշված խնդիրներին է անդրադարձել նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը խորհրդարանական ընտրությունների իր դիտորդական վերջնական զեկույցում՝ նշելով, որ համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, նորաստեղծ հասարակական կազմակերպություններին ընտրությունների դիտարկում իրականացնելու արգելքի մասին դրույթը պետք է վերանայվի, իսկ դիտորդների՝ հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը կարելի է սահմանել ընտրությունների օրվան ավելի մոտ<sup>36</sup>:

ԸՕ-ի նորամուծություններից էր նաև այն, որ, եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը, որը չի կարող նվազ լինել 15-ից:

Վերջին տարիների մի շարք համապետական և տեղական ընտրական ընտրություններ բացահայտեցին, որ դիտորդական առաքելությունները հաճախ լուրջ չեն ընկալվում որպես հանրային վերահսկողության գործիք: Հաճախ ձևավորվում են պատվեր կատարող կամ, այսպես կոչված, «կեղծ» դիտորդական առաքելություններ, որոնք անկողմնակալ չեն և կարող են հետապնդել տարբեր նպատակներ, ինչպես օրինակ, որևէ քաղաքական կողմի շահերին սպասարկող հայտարարությունների տարածում կամ ընտրողներին ուղղորդում, որին ակնատես էղանք 2017 թ. ապրիլի խորհրդարանական ընտրություններին: Կեղծ և ձևական դիտորդությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է որոշակի պարտավորություններ սահմանել դիտորդական առաքելությունների համար, օրինակ, որոշակի ժամկետներում ներկայացնել իրենց դիտորդության արդյունքները զեկույցների տեսքով՝ դրանց համար նախատեսելով որոշակի չափանիշներ: Ինչպես նաև հարկ է ներդնել որոշ օրենսդրական սահմանափակումներ, օրինակ, որ դիտորդական կազմակերպության հիմնադիրների կամ ղեկավար մարմինների անդամների կազմում ընտրություններին մասնակցող կուսակցության անդամի կամ թեկնածուի մասով սահմանափակում նախատեսելու նպատակով:

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն նաև միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները՝ հրավերի առկայության

<sup>36</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>

դեպքում: Միաժամանակ, սահմանված է հրավեր ուղարկող պետական մարմինների (անձանց) ցանկը: Սակայն ՀՀ ընտրական օրենսգրքի կարգավորումներից պարզ չէ՝ այս կազմակերպություններն ինչպես և ինչ ժամկետում պետք է դիմեն պետական իրավասու մարմիններին հրավեր ստանալու համար, իսկ վերջիններս քանի օր առաջ կամ ինչ ժամկետում պետք է ապահովեն հրավերի տրամադրումը կամ մերժումը:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Կրճատել ՀԿ-ները հավատարմագրելու վերջնաժամկետը՝ սահմանելով հավատարմագրման իրականացման համար ողջամիտ ժամկետ և նորարարական տեխնոլոգիական լուծումներով պարզեցնել ԿՀՀ-ի կողմից իրականացվող գործընթացները:

- Վերացնել դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների գումարային թիվը տեղամասում սահմանափակելու հանձնաժողովի իրավունքը:

- Սահմանել միջազգային և օտարերկրյա դիտորդական կազմակերպություններին հրավեր ուղարկելու ընթացակարգը:

- Ամրագրել տեղական դիտորդական կազմակերպությունների կողմից 3-ամսյա ժամկետում իրենց զեկույցները հրապարակման համար ԿՀՀ ներկայացնելու պահանջ: Ձեկույցում պետք է նշվի դիտորդական կազմակերպության ֆինանսավորման աղբյուրը:

- Ներդնել օրենսդրական սահմանափակումներ այն հաշվառմամբ, որ դիտորդական կազմակերպության ղեկավար մարմիններում չեն կարող լինել ընտրություններին մասնակցող կուսակցությունների ցուցակներում ընդգրկված թեկնածուները:

### **2.9.2. Զանգվածային լրատվության միջոցներ**

#### *Հիմնախնդիր*

Մինչև 2016 թ. ԸՕ-ի ընդունումը, երբևէ նախատեսված չի եղել ՁԼՄ-ների հավատարմագրում՝ ընտրությունները լուսաբանելու համար: 2016 թ.-ին առաջին անգամ ոչ միայն սահմանվեց ՁԼՄ-ի հավատարմագրումը, այլև ներմուծվեցին հավատարմագրման համար անհրաժեշտ որոշ արգելապատնեշներ և սահմանափակումներ, այն է՝ առնվազն մեկ տարի ՁԼՄ-ն իր անունից պետք է տարածած լինի լրատվության միջոց: Ընդ որում, մեկ տարվա սահմանափակումը կիրառելի չէ, եթե լրատվական գործունեություն իրականացնողը լրատվության միջոց է տարածում վերգետնյա եթերային հեռարձակմամբ, ինչը չհիմնավորված խտրական մոտեցում է զանգվածային լրատվության մյուս միջոցների նկատմամբ:

ԸՕ-ով ներմուծվեց սահմանափակում, որ, եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը, որը չի կարող նվազ լինել 15-ից: Ընդ որում, այս սահմանափակումը չի տարածվում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա, ինչը կրկին խտրական կարգավորում է՝ ՁԼՄ-ի գործունեության տեսակով պայմանավորված:

ԶԼՄ-ներով նախընտրական քարոզչության, երբեմն, կողմնակալ լուսաբանումը և (կամ) թեկնածուների համար ստեղծվող անհավասար պայմանները հաշվի առնելով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի փորձագիտական խմբի վերջնական զեկույցում,<sup>37</sup> ինչպես նաև 2017 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցում<sup>38</sup> առաջարկել է նախատեսել լրատվամիջոցների իրական (վերջնական և շահառու) սեփականատերերի և ֆինանսավորման վերաբերյալ համապարփակ և ժամանակին տեղեկատվություն հրապարակելու պարտադիր պահանջ:

Լրատվամիջոցի թափանցիկության ապահովման պահանջը դիտարկվում է ոչ միայն ընտրությունների համատեքստում, ուստի այս հանձնարարականի ապահովումը կարող է տեղ գտնել ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքում, այնպես էլ՝ ոլորտային օրենքում: Միաժամանակ, նշված պահանջի կատարումը պետք է ապահովված լինի իրավական հետևանքներով, ընդհուպ մինչև լիցենզիայի կասեցում որոշակի ժամանակահատվածով կամ լիցենզիայից զրկում, եթե նախագուշացումից հետո սահմանված ժամկետում ԶԼՄ-ն չի ապահովում օրենսդրական այս պարտականության կատարումը:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Կրճատել ԶԼՄ-ները հավատարմագրելու վերջնաժամկետը՝ սահմանելով հավատարմագրման իրականացման համար ողջամիտ ժամկետ և նորարարական տեխնոլոգիական լուծումներով պարզեցնել ԿԸՀ-ի կողմից իրականացվող գործընթացները:

- Վերացնել դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների թիվը տեղամասում սահմանափակելու հանձնաժողովի իրավունքը:

## **2.10. Պատասխանատվություն ընտրախախտումների համար**

### *Հիմնախնդիր*

Ընտրությունների գործընթացի օրինականությունն ապահովելու և հնարավոր ընտրախախտումները կանխարգելելու նպատակով կարևոր է վերանայել պատասխանատվության առկա իրավակարգավորումները: Դրանք ինքնանպատակ չպետք է լինեն, այլ բավարար զսպող մեխանիզմ հանդիսանան՝ պատժի սպառնալիքով ստիպելով ձեռնպահ մնալ հակաիրավական վարքագծի դրսևորումից: Մինչդեռ գործող Քրեական և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով նախատեսված պատասխանատվության միջոցներն անհամաչափ մեղմ են և չեն ծառայում այդ նպատակին: Իսկ որոշ դեպքերում արարքը որակվել է զանցանք, թեև հանրորեն վտանգավորության աստիճանով այն պետք է հանդիսանար քրեական օրենսգրքով արգելված արարք: Մասնավորապես, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում բարեգործության արգելքը խախտելը համարվում է վարչական իրավախախտում, եթե դրա համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ<sup>39</sup>: Անհրաժեշտ է քրեականացնել ՎԻՎՕ 40-10-րդ հոդվածը, որի արդյունքում ակնկալվում է, որ անբարեխիղճ թեկնածուները և կուսակցությունները կզրկվեն ընտրակաշառքի բաժանումը բարեգործության անվան տակ քողարկելու դեպքում առավել մեղմ, վարչական պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունից: Բացի դրանից հստակեցվում է ընտրակաշառք տալու սուբյեկտիվ կողմի օրենսդրական ամրագրումը, ինչպես նաև քրեականացվում են ներկայումս հանցագործություն չհամարվող մի շարք արարքներ՝ ընտրողի կողմից կաշառքի առաջարկը կամ խոստումն ընդունելը, կաշառք խնդրելը, ընտրողին կաշառք առաջարկելը, սեփական քվեարկության գաղտնիությունը դիտավորությամբ խախտելը:

<sup>37</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

<sup>38</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>

<sup>39</sup> Վարչական իրավախախտումների վեաբերյալ 33 օերնսգիրք, հոդված 40. 10

Առկա կարգավորումների համաձայն՝ նախատեսված է վարչական իրավախախտումների վերաբերյալ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից արձանագրության կազմում, որի հիման վրա միայն կարելի է հայց ներկայացնել վարչական դատարան: Իրավասու ընտրական հանձնաժողովից մերժվելու դեպքում նշված սուբյեկտները դիմում են դատարան՝ խնդրելով դատարանին պարտավորեցնել ընտրական հանձնաժողովին արձանագրել իրավախախտումը և դիմել դատարան: Դատական քննության ժամանակ, ըստ էության, քննության առարկա է դառնում վարչական իրավախախտման լինել/չլինելու փաստը: Եվ նման փաստը հաստատելու դեպքում դատարանը պարտավորեցնում է ընտրական հանձնաժողովին դիմել դատարան՝ զանցանքը գործած անձանց վարչական պատասխանատվության կանչելու պահանջով: Այս ընթացակարգը հակասում է հանրային ռեսուրսները խնայելու, դրանք առավել արդյունավետ ծախսելու, ընտրությունների ժամանակաշրջանում ընթացակարգերը նվազ ժամանակատար սահմանելու և ընտրախախտումների դեմ արդյունավետ պայքարելու տրամաբանությանը:

#### *Առաջնահերթ լուծումներ*

• Խստացնել քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքերում քրեական պատժի տեսակն ու չափը:

• Քրեականացնել ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը:

• Խստացնել ընտրակաշառքի համար քրեական պատասխանատվության տեսակն ու չափը:

• Քրեականացնել ընտրողի կողմից դիտավորությամբ քվեարկության գաղտնիության խախտումը՝ որպես ոչ ծանր հանցագործություն:

• Ապաքրեականացնել այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ անփութությամբ սուտ հայտարարություն տալը: Իսկ դիտավորությամբ արված նույն արարքի հիմնական պատժաչափը սահմանել ճիշտ այնքան, որքան օրենսդիրն այն սահմանել է սուտ մատնության համար:

• Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օերնսգիրքը լրացնել ևս մեկ հոդվածով, որով պատասխանատվություն կսահմանվի տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք չունեցող անձի կողմից ելումուտի կանոններն ակնհայտ դիտավորությամբ խախտելու և տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք ունեցողի կողմից վկայական չկրելու համար:

• Իրավունք վերապահել դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերին ՎԻՎՕ 401-404-րդ, 40.6 -40.14-րդ (ընտրությունների հետ անմիջականորեն կապված զանցանքների) հոդվածներով վարչական իրավախախտումների դեպքում առանց իրավասու ընտրական հանձնաժողովին դեմելու միանգամից դիմելու վարչական դատարան՝ զանցանքը գործած անձանց վարչական պատասխանատվության կանչելու պահանջի մասին հայցադիմումով:

## **2.11. Ընտրական վարչարարություն**

### **Տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորում**

*Հիմնախնդիր*



Տասնամյակներ շարունակ ընտրական հանձնաժողովների ձևավորման սկզբունքը եղել է ընտրական կարգավորումների շուրջ քաղաքական և հասարակական քննարկումների առանցքային թեմաներից: Համապարփակ լուծման բացակայության պայմաններում՝ ընտրվել էր խառը համակարգ, որտեղ կենտրոնական և տարածքային (ընտրատարածքային) մակարդակներում ընտրական հանձնաժողովները ձևավորվում են մասնագիտացման սկզբունքով, իսկ ստորին տեղամասային մակարդակում՝ կուսակցական նշանակումներով: ՏՀՀ-ի ձևավորման այդ եղանակի ընտրությունն առաջին հերթին պայմանավորված էր ընտրական գործընթացների նկատմամբ հանրային ցածր վստահությամբ:

Թե՛ 2017 թ. խորհրդարանական և թե՛ 2018 թ. Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող տեղական հասարակական կազմակերպությունները արձանագրել են տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեության թափանցիկության և մասնագիտացման պակաս:

Արտահերթ ԱԺ ընտրություններից առաջ ԸՕ-ի վերանայման այս փուլում ևս մեկ անգամ շրջանառության մեջ դրվեցին ՏՀՀ կազմավորման երկու այլընտրանքային տարբերակներ.

1. ՏՀՀ-ի անդամների նշանակում քաղձառայողների թվից
2. ՏՀՀ-ի կազմավորում՝ բաց մրցույթ իրականացնելու միջոցով

Այս տարբերակներն առաջարկողների հիմնական փաստարկն այն է, որ գործող իշխանությունները պետք է ստանձնեն ընտրությունների անցկացման ողջ պատասխանատվությունը, մինչդեռ ՏՀՀ-ի կուսակցական նշանակումներով այդ պատասխանատվությունը տարրալուծվում է: Այս մոտեցումներն արժանի են քննարկման, սակայն ԱԺ ընտրություններից առաջ առավել կարևոր է հաշվի առնել գոյություն ունեցող իրողությունները, որոնք նշված առաջարկներն իրականացնելը դարձնում են կամ անհնարին, կամ շատ ռիսկային:

Ժամանակատար լինելու հանգամանքից զատ՝ բաց մրցույթի անցկացումը կարող է հնարավորություն տալ կազմակերպչական և ֆինանսական մեծ ռեսուրսներ ունեցող կուսակցությանը (կուսակցություններին) մոբիլիզացնել և ֆինանսապես մոտիվացնել ՏՀՀ անդամության թեկնածուներ մի մեծ բանակ, որը կխաթարի ՏՀՀ-ի քաղաքական չեզոքությունը (բալանսավորվածությունը):

Այդուհանդերձ՝ քաղձառայողների միջոցով ՏՀՀ-ների ձևավորումը կարող է հեռանկարային ծրագիր լինել, հատկապես ՏԻՄ ընտրություններում և տեղական հանրաքվեների քվեարկությունը կազմակերպելու և անցկացնելու գործընթացում:

Գործող կարգավորումներով<sup>40</sup> ՏՀՀ անդամների թիվը փոփոխական է, և այս գումարման ԱԺ-ում առկա խմբակցությունների քանակը հաշվի առնելով՝ ՏՀՀ-ներն ունենում են 10 անդամ (երկուական ամեն խմբակցություն և երկու անդամ համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված): Հարկ է նշել, որ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից 2 ՏՀՀ անդամի նշանակումը, որոշ չափով խեղաթյուրում է կուսակցական սկզբունքով հանձնաժողովի ձևավորումը: Բացի դրանից, տվյալ իրավիճակում կազմավորվում է ՏՀՀ, որի անդամների թիվը էապես ավելի է, քան այն գործառույթները, որոնք պատվիրակվում են ՏՀՀ անդամներին: Այսինքն, անհրաժեշտ թվից ավելի ՏՀՀ անդամ ունենալը աննպատակահարմար է թե՛ կազմակերպչական տեսանկյունից և թե՛ բյուջետային բեռի նկատառումներից ելնելով:

ՏՀՀ-ներում նախագահների և քարտուղարների պաշտոնները բաժանվում են ըստ ԱԺ-ում խմբակցությունների ունեցած համամասնության՝ ստացած մանդատների թվին համապատասխան<sup>41</sup>: Այս

<sup>40</sup> ԸՕ, հոդված 44, մաս 2

<sup>41</sup> ԸՕ հոդված 44, մաս 5

կարգավորումը հակասում է ընտրական գործընթացներում ընդգրկված սուբյեկտների համար հավասար պայմանների ապահովման սկզբունքին: Անթերի և անաչառ ընտրական վարչարարության պայմաններում, թերևս, ՏՀՀ այս պաշտոնների բաշխումը պետք է որ էական չլիներ, սակայն որոշ փորձագիտական ուսումնասիրություններ վկայում են, որ քվեարկության արդյունքների (իսկ որոշ դեպքերում արձանագրված մասնակցության թվերի վրա) վիճակագրականորեն նշանակալի ազդեցություն է ունեցել իշխող քաղաքական ուժի կողմից ՏՀՀ նախագահ լինելու հանգամանքը<sup>42</sup>:

ՏՀՀ ղեկավար պաշտոնների արդարացի և հավասարակշռված բաշխման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև միջազգային կառույցների կողմից<sup>43</sup>, ԵՄ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից ՀՀ ընտրական օրենսդրության վերաբերյալ տրված եզրակացություններով (CDL-AD(2011)032, CDL-AD(2017)029), ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերջնական գեկույցով:

#### *Առաջնահերթ լուծումներ*

- Ամրագրել, որ տարածքային ընտրական հանձնաժողովը չի նշանակում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ, եթե տվյալ տեղամասային հանձնաժողովն արդեն ունի գործառույթների իրականացման համար բավարար թվով անդամներ:

- Փոփոխել տարածքային ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգը, սահմանելով, որ անդամներից 3-ին նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը և մեկական անդամ նշանակում են Ազգային ժողովում ներկայացված խմբակցությունները:

### **Ընտրական վարչարարության արդյունավետության և թափանցիկության բարձրացում**

#### *Հիմնախնդիր*

Տեղամասային կենտրոններում տեսախցիկների տեղադրումը, ընտրողների նույնականացման սարքերի ներմուծումը և հատկապես քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակումը մեծամասամբ կատարեցին իրենց դերը ընտրախախտումները կանխելու և ընտրություններն ավելի թափանցիկ դարձնելու հարցում: Այդուհանդերձ, դեռևս մնում են մտահոգություններ, որոնք, մասնավորապես, պայմանավորված են ընտրացուցակների թերություններով և հանձնաժողովների նկատմամբ վստահության բացակայությամբ: Բացի դրանից, վարչարարությունը միշտ տեղ ունի զարգանալու ժամանակակից տեխնոլոգիական լուծումների դարաշրջանում:

Անհրաժեշտ է շարունակաբար օպտիմալացնել և արդյունավետ դարձնել ընտրական գործընթացներում ներգրավված դերակատարների, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների, ոստիկանության, թեկնածուների, ընտրողների, դիտորդական կազմակերպությունների և այլ մասնակիցների աշխատանքը և թափանցիկ դարձնել ընտրական ողջ գործընթացը:

Մասնավորապես, վերանայել և տեխնոլոգիական լուծումներով կատարելագործել մի շարք գործընթացներ, ինչպիսիք են՝

<sup>42</sup> Sjoberg, Fredrik M., Political Parties and Election Fraud (September 24, 2013). <http://dx.doi.org/10.2139/ssrn.2274873>

<sup>43</sup> Վենետիկի հանձնաժողով (CDL-AD (2011)032, CDL-AD (2017)029)

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերջնական գեկույց

- քվեարկության օրվա և վայրի վերաբերյալ ընտրողներին ծանուցման գործող ծախսատար և անարդյունավետ փոստային մեթոդը փոխարինել առավել արդյունավետ մեթոդով, օրինակ, հեռախոսային կարճ հաղորդագրություններով՝ կրճատելով փոստային և տպագրական ծախսերը և խնայելով ժամանակը □

- ընտրողների մատնահետքերը պարզապես սքանավորելու փոխարեն իրականացնել ընտրողների կենսաչափական նույնականացում՝ բոլոր ընտրողներին տրամադրելով նույնականացման քարտեր՝ ստեղծելով մատնահետքերի միասնական շտեմարան և համաժամանակյա կապ ստեղծելով բոլոր տեխնիկական գրանցման սարքերի միջև □

- դիտորդների գրանցման և վկայականների տրամադրման գործընթացում նվազագույնի հասցնել մարդկային գործոնը և կրճատել ժամկետները՝ նախընտրական թեժ ժամանակահատվածում դիտորդների անուններ լրացնելու և վկայական տալու բեռը ԿԸՀ-ից տեղափոխելով ծրագրային համապատասխան ապահովմամբ ինտերնետային համակարգերի վրա, օրինակ, հեռահար գրանցման և ինքնուրույն վկայականներ տպագրելու միջոցով □

- տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը դարձնել առավել թափանցիկ՝ ամրագրելով տեսախցիկներով կահավորելու պահանջ, որոնցով հնարավորություն կստեղծվի ուղիղ ժամանակային ռեժիմում հատուկ կայքի միջոցով հեռարձակել տեղամասային ընտրական հանձնաժողովներից փաստաթղթերի ստացման և արդյունքների աղյուսակավորման գործընթացը □

- դիմում-բողոքների ընդունման համակարգը՝ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ընդունելով էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր՝ ավանդական և տարածության ու ժամանակի տեսանկյունից առավել ռիսկային փոստային ծառայության կիրառման փոխարեն:

Այս հարցերի մի մասին հնարավոր է անդրադառնալ ընտրություններից հետո, բայց սրանց մի մասն իրենց լուծումը կարող են ստանալ կարճ ժամկետներում՝ Հայաստանում առկա տեղեկատվական տեխնոլոգիաների հսկայական պոտենցիալի արդյունավետ կիրառման շնորհիվ:

### *Առաջնահերթ լուծումներ*

- Ընտրողների ծանուցման փոստային մեթոդը հնարավորինս փոխարինել այլ՝ նվազ ծախսատար մեթոդով:

- Սահմանել, որ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ֆիքսված տեսախցիկներով տեսանկարահանումը կարող է իրականացվել ոչ բոլոր ընտրական տեղամասերում և հանել տեղամասային կենտրոնի մուտքի շրջակայքը նկարահանելու պարտադիր պայմանը:

## **2.12. Ազգային ժողովի ընտրակարգ**

### *Հիմնախնդիր*

Ընտրությունների ֆորմալ շատ կանոնների ազդեցությունը մարդկանց վարքի և ինստիտուտների վրա դրսևորվում է երկարաժամկետ հատվածում: Սա հատկապես ճիշտ է ընտրակարգի<sup>44</sup> հետ կապված փոփոխություններում, երբ մի քանի ընտրական շրջափուլից հետո նոր ակնհայտ է դառնում ֆորմալ խաղի կանոնների ազդեցությունը: Հետևաբար, նաև հնարավորություն է ստեղծվում գնահատել տվյալ

<sup>44</sup> Ընտրակարգի մասն են այն ֆորմալ կանոնները, որոնք որոշում են քվեի տեսակը, ընտրական արգելապատնեշները, ընտրական բանաձևերը, որոնց միջոցով քվեները հաշվարկի միջոցով որոշվում մանդատների հատկացումը, ընտրատարածքի չափը և այլն:

ընտրակարգի ազդեցությունը քաղաքական և կուսակցական համակարգերի, ընտրողների վարքի, առանձին խմբերի մասնակցության և ներակայացվածության և բազմաթիվ այլ գործոնների վրա:

Սակայն, ԱԺ ներկայիս ընտրակարգի հետ կապված ԸՕ կարգավարումները կարելի է բացառիկ համարել՝ բացասական առումով, քանի որ խիստ կարճ ժամանակամիջոցում արդեն իսկ ապացուցել են իրենց անարդյունավետությունը: Ակնհայտ է, որ ընդամենը 2-3 տարի առաջ սահմանված և ընդամենը մեկ անգամ կիրառված ընտրակարգն է, որ նպաստել է ոչ ներառական և ոչ ներկայացուցչական օրենսդիր մարմնի ձևավորմանը, որը փաստորեն չի արտացոլում հասարակության քաղաքական տրամադրությունները:

ԱԺ գործող ընտրակարգի հետ կապված առկա են մի շարք խնդրահարույց կետեր, որոնց զգալի մասը փոխկապակցված են կամ արդյունք են սահմանադրական պահանջների: Այդուհանդերձ, ստորև փորձ է արվել խմբավորել այդ խնդիրները և ըստ այդ խմբերի ներկայացնել լուծումները:

### **2.12.1. Կայուն մեծամասնության և համամասնական ընտրակարգի հակադրություն**

#### *Հիմնախնդիր*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի մի շարք փոփոխություններ համակարգային բնույթ ունեին: Մի կողմից իրականացվեց խորհրդարանական կառավարման ձևի անցումը և խորհրդարանի ձևավորման համամասնական սկզբունքն ամրագրվեց սահմանադրորեն<sup>45</sup>, մյուս կողմից Սահմանադրության նույն հոդվածով նախատեսվեց կայուն մեծամասնության ապահովման դրույթը, իսկ հետագայում արդեն ընտրական օրենսգրքով ընդունվեցին կարգավորումներ, որոնք ոչ միայն իրենց տրամաբանությամբ հակասության մեջ էին մտնում հռչակված նպատակների հետ, այլև թե՛ առանձին վերցված և թե՛ դրանց համադրությունը, եթե չասենք ոչ տրամաբանական էին, ապա մարդկության պատմության ընթացքում երբևէ չտեսնված «նորարարություններ» էին:

Սակայն, նախ անհրաժեշտություն կա ներկայացնել, թե ինչ տեսակի ժողովրդավարության (կառավարման) մոդել է նախընտրելի և որքանով ընտրակարգի հետ կապված ֆորմալ կանոնները կարող են պայմանավորել այդ մոդելները: Առանց ընտրական համակարգերի երկու հիմնական ընտանիքների և դրանց ենթատեսակների նկարագրության մանրամասների ներկայացման և գիտնականների բանավեճերի ու տարբեր երկրների փորձերի վերլուծության, հարկ է ընդգծել, որ մեծ հաշվով առկա է տարածված կարծիք<sup>46</sup> առ այն, որ մեծամասնական համակարգն ասոցացվում է ժողովրդավարության հակադրման մոդելին (adversarial democracy), որտեղ առկա են երկու հիմնական հակադիր ուժերի միջև մրցակցություն, որի արդյունքում հերթափոխով դրանցից յուրաքանչյուրն իր վրա է վերցնում երկրի կառավարման հիմնական բեռը, մինչդեռ մյուսը հանդես է գալիս որպես ընդդիմախոս և հակակշիռ: Իսկ համամասնական ընտրակարգը բնորոշ է համաձայնության վրա հիմնված կամ խորհրդակցական ժողովրդավարություններին<sup>47</sup> (համապատասխանաբար consensual<sup>48</sup> և deliberative democracy): Այս մոդելին բնորոշ հատկանիշներից է մասնակցային և ներառական քաղաքական մարմինների ձևավորումը, որտեղ փոխադարձ համաձայնության հիման վրա է տեղի ունենում որոշումների կայացումը, բանակցությունների և փոխզիջումների միջոցով երկուսից ավելի կուսակցությունների և քաղաքական ուժերի միջև

<sup>45</sup> ՀՀ Սահմանադրություն հոդված 89, 3-րդ մաս

<sup>46</sup> Norris, P. (2004), *Electoral Engineering: Voting Rules and Political Behavior*, Cambridge: Cambridge University Press, p. 66-68

<sup>47</sup> Թեև դրանց մեջ առկա են տարբերություններ, բայց այս ենթատեսքստում կարելի է նաև օգտագործել որպես հումանիշներ:

<sup>48</sup> Lijphart, A. (1991) *Constitutional Choices for New Democracies*, *Journal of Democracy*, Vol. 2, Number 1, Johns Hopkins University Press, pp. 72-84 կամ Lijphart, A. (2006) *The Case for Power Sharing*; in *Electoral Systems and Democracy*, edited by Larry Diamond and Marc F. Plattner; Johns Hopkins University Press, pp. 42-55

համաձայնության հանգեղը, առկա է իշխանության և որոշումների կայացման լիազորությունների ավելի լայն բաժանումը՝ ներառելով նաև փոքրամասնություն ներկայացնող ուժերին: Մա նպաստում է թե՛ իշխանության մարմիններում ավելի փոքր ուժերի ներկայացվածությանը և ազդեցության ավելացմանը, թե՛ ավելի մեծ թվով քաղաքացիների ընտրությունների մասնակցությանը, թե՛ հնարավորություն է տալիս լրացուցիչ ֆորմալ կարգավորումների միջոցով նպաստելու որոշումների կայացման գործում պակաս դեր ունեցող խմբերի ներկայացվածությանը և այլն: Այս մոդելի պարագայում շատ կարևոր է, որ ընտրակարգը նպաստի առավել լայն թվով քաղաքական ուժերի մրցակցությանը, մանդատներ հատկացվեն քվեների համամասնությամբ, իշխանության մարմինները լինեն առավել ներառական՝ հնարավորություն ստեղծելով հասարկության լայն շերտերի ներկայացվածությանը:

Այդ մոդելի քննադատները նշում են, որ այն կարող է խոցելի լինել կառավարելիության տեսակետից, քանի որ հնարավորություն է ստեղծում, որ ոչ մի քաղաքական ուժ բավարար մանդատներ չունենա պառլամենտում իր քաղաքականությունն արդյունավետորեն իրականացնելու համար՝ դրանից բխեցնելով քաղաքական անկայունության ռիսկեր:<sup>49</sup>

Վերադառնալով Հայաստանին՝ նշենք, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների և 2016 թվականին ընդունված ընտրական օրենսգրքի առանցքում հենց անկառավարելիության և քաղաքական անկայունության հետ կապված ռիսկերի նվազման մտահոգությունն է եղել՝ չնայած նրան, որ մի կողմից համամասնական ընտրակարգով ձևավորվող խորհրդարանները, աշխարհում ամենից հաճախ հանդիպող մոդելները լինելով հանդերձ, հազվադեպ են առերեսվում նման խնդիրների հետ, իսկ մյուս կողմից Հայաստանում էլ անկախության անցած բոլոր տարիներին փորձով ապացուցվել է, որ անգամ այն իրավիճակներում, երբ գործադիրը մեծամասնություն չի ունեցել օրենսդիրում, կառավարելիության երկարաժամկետ խնդիր չի եղել, քանի որ ձևավորել է կամ նոր մեծամասնություն, կամ առանձին հարցերի շուրջ փոխադարձ համաձայնության հիման վրա հնարավոր է եղել որոշումներ անցկացնել:

Իրականում անհամատեղելի մոտեցումների՝ համամասնականության և երաշխավորված մեծամասնության մեկտեղելու փորձը դեռ տեսանելի էր սահմանադրական փոփոխությունների հիմնավորումներում, որտեղ մի կողմից խոսվում էր կոնսենսուսայ ժողովրդավարությանն ու բազմակուսակցական համակարգի հետ ասոցացված համամասնական ընտրակարգի անցման անհրաժեշտության մասին («ներկայացուցչական մարմինն առանց զգալի անհամամասնությունների»), մյուս կողմից էլ առաջարկվում է ներդնել մեծամասնականի տարրեր՝ «կառավարման ունակ խորհրդարանական մեծամասնություն» երաշխավորելու և «երկբեռ կուսակցական համակարգի ձևավորմանը» նպաստելու համար<sup>50</sup>:

Շենք կառավարիության հետ կապված ռիսկերը նվազեցնելու հիմնավորմամբ ներմուծվեց կայուն խորհրդարանական մեծամասնություն ապահովելու սահմանադրական պահանջը (22 Սահմանադրություն հոդված 89, 3-րդ մաս), որի հիման վրա ստեղծվել է կարգավորումների մի այնպիսի համախումբ, որ էապես հեշտացնում է մեկ քաղաքական ուժի գերիշխանությունը, այդ թվում նաև համամասնական հոշակված ընտրակարգ, որով անհրաժեշտության դեպքում մանդատները կարող են բաշխվել ստացված քվեների համամասնության էական խախտելու միջոցով: Այսպես, ԸՕ-ն նախատեսում է լրացուցիչ տեղերի հատկացման մեխանիզմ (կամ ավելի հայտնի բոնուսներ) մեկ քաղաքական ուժի կողմից խորհրդարանական կայուն մեծամասնության՝ տեղերի 54 տոկոս ապահովագրելու համար, եթե անգամ չի ստացել քվեների բավարար համամասնություն<sup>51</sup>: Ի հեճուկս համամասնական ընտրակարգի և հանուն կառավարելիության լրացուցիչ տեղերի հատկացման կարգավորումներ՝ բոնուսներ առկա են նաև Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրակարգում (մանրամասն ստորև):

<sup>49</sup> Norris, P. (2004), *Electoral Engineering: Voting Rules and Political Behavior*, Cambridge: Cambridge University Press, pp. 66-68

<sup>50</sup> Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ, էջ 25-28,

<http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxaqci%20himnavorumner.pdf>

<sup>51</sup> Հոդված 96.1 և Հոդված 97.3

Համամասնականության և ներառականության սկզբունքի տեսակետից խնդրահարույց է նաև կոալիցիա կազմելու իրավունք ունեցող քաղաքական ուժերի առավելագույն թվի սահմանափակումը՝ հնարավորություն չստեղծելով 3-ից ավելի քաղաքական ուժերի նման կոալիցիա կազմել<sup>52</sup>։ Սահմանափակող է նաև կոալիցիա կազմելու համար նախատեսված ժամանակահատվածը՝ 6 օր, ինչը նվազեցնում է խորհրդարանում հայտնված ուժերի միջև բանակցությունների միջոցով համաձայնության գալու հավանականությունը և ավելացնում է երկրորդ փուլի իրականացման հնարավորությունը։ Համամասնական ընտրակարգով ձևավորվող խորհրդարանում երկրորդ փուլի<sup>53</sup> անցկացումը ևս ներդրվել է խորհրդարանական մեծամասնություն ապահովելու սահմանադրական նորմի սպասարկման համար։ Նման կարգավորման առկայությունը խրախուսում է ամենից շատ ձայներ հավաքած երկու ուժերին համաձայնության չգնալ միմյանց կամ այլ քաղաքական ուժերի հետ, քանի որ իրական հնարավորություն ունեն էապես մեծացնել իրենց տեղերի համամասնությունը երկրորդ փուլի շնորհիվ։

Ամփոփելով հարկ է նշել, որ աշխարհի խորհրդարանների մեծամասնություն (87 երկիր կամ դեպքերի 40 տոկոսից ավելին<sup>54</sup>) ձևավորվում են հենց զուտ համամասնական ընտրակարգով։ Մակայն դրանցից և ոչ մեկում չի կարելի գտնել կայուն մեծամասնության համար նախատեսված՝ նշված կարգավորումների ամբողջականությունը (համամասնություն էապես փոխող լրացուցիչ մանդատների տրամադրում, կոալիցիա կազմելու հետ կապված թվային և ժամկետային խիստ սահմանափակումներ, երկրորդ փուլի անցկացում)։ Այդուհանդերձ, համամասնական ընտրակարգով ձևավորվող խորհրդարանում կայուն մեծամասնության երաշխավորման համար ստեղծված այս կարգավորումների վերացման համար ամենահիմնավոր փաստարկը ոչ թե՛ դրանց համամասնականության և ներառականության, կոնսենսուալ ժողովրդավարության հակառակ լինելն է, ոչ էլ այն փաստը, որ խորհրդարանի ձևավորման համար նման կարգավորումներ չկան աշխարհի որևէ այլ երկրում, այլ այն, որ դրանց կյանքի կոչումից ընդամենը մեկ տարի անց արդեն փաստվել է, որ մեկ քաղաքական ուժի գերակայություն երաշխավորող նման արհեստականի լուծումներ ի վիճակի չեն եղել լուծել իրենց առջև դրված խնդիրը՝ փաստացի չեն երաշխավորել կայուն մեծամասնության գոյությունը և նպաստել է քաղաքական ճգնաժամի հանդես գալուն։

#### *Առաջնահերթ լուծումներ*

- վերացնել կոալիցիաներ կազմելու՝ կուսակցությունների թվի սահմանափակումը, ինչպես նաև էապես ավելացնել կոալիցիա կազմելու համար նախատեսված ժամանակահատվածի տևողությունը։ Սա համահունչ է նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համատեղ կարծիքներում արտահայտված առաջարկություններին<sup>55</sup>։

#### *Երկարաժամկետ լուծումներ*

Կայուն խորհրդարանական մեծամասնություն երաշխավորող սահմանադրական դրույթը և դրա հետ կապված ԸՕ կարգավորումների վերացումը խիստ կարևոր է։ Մակայն դա հնարավոր է միայն համապատասխան սահմանադրական դրույթի փոփոխությունից հետո։ Ուստի թե՛ կայուն մեծամասնության սահմանադրական պահանջի և թե՛ այդ պահանջը երաշխավորելու համար նախատեսված ԸՕ մնացյալ կարգավորումների (54 տոկոս տեղեր՝ ներառյալ բոնուսների միջոցով և երկրորդ փուլի հնարավորություն) վերացումը և առավել լիարժեք համամասնականության սկզբունքի ներմուծումը պետք է առաջնահերթություն դառնա արտահերթ ընտրություններից և նոր ԱԾ ձևավորելուց հետո։

<sup>52</sup> Հոդված 97.1

<sup>53</sup> Հոդված 98

<sup>54</sup> Այս ցանկում ներառված չեն անգամ խառը ընտրակարգ և քիչ տարածում ունեցող համամասնականի ենթատեսակ համարվող ընտրակարգերը։ Աղբյուրը International IDEA, electoral system for national legislatures <https://www.idea.int/data-tools/question-view/130355>

<sup>55</sup> Second Joint Opinion Electoral Code CDL-AD (2016)031, point 20 and 29 (<https://www.osce.org/odihr/elections/armenia/275511?download=true>)

Դրան պետք է նախորդի քաղաքական ուժերի շրջանակում այս խնդրի շուրջ լայն կոնսենսուսի ձևավորումը, ինչի նախադրյալներն արդեն նշմարելի են:

Այդուհանդերձ, կայուն մեծամասնության հետ կապված խորհրդարանական խմբակցություններից ստացված միակ առաջարկը կապված է կուսակցություններին կամ կուսակցությունների դաշինքներին տրվող մանդատների առավելագույն 2/3 շեմի մինչև մանդատների ընդհանուր թվի 3/5-ը նվազեցման հետ<sup>56</sup>:

Հանձնաժողովը գիտակցում է, որ այս առաջարկը միտված է նվազեցնելու մեկ քաղաքական ուժի ձեռքում իշխանությունների չափազանց կենտրոնացումը, ինչը դեմ է կոնսենսուսային ժողովրդավարության մոդելին: Սակայն մյուս կողմից նման փոփոխությունները դեմ կզման սույն հայեցակարգի հիմքում ընկած սկզբունքների՝ հնարավորինս պարզեցված ընտրակարգի տեղերի հեշտ ընկալելի բաշխում մաքուր համամասնական սկզբունքով: Ավելին, այն էլ ավելի կխաթարի Սահմանադրության 89-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված՝ Ազգային ժողովի՝ համամասնական ներկայացուցչական մարմին լինելու պահանջին: Ուստի առաջարկվում է ԱԺ խմբակցություններին արտահերթ ընտրություններին ընդառաջ փոխել կանոնակարգ օրենքը՝ նոր հնարավորություններ օժտելով ընդդիմությանն այն պարագայում, եթե այն պակաս ներկայացված է (օրինակ տեղերի 1/3-րդ տեղերից պակաս ունեցող), որոշակի պաշտոնների հատկացում (ԱԺ նախագահի տեղակալ, որոշակի կոնկրետ հանձնաժողովի (հանձնաժողովների) նախագահ և այլն): Սա կնպաստի առավել ներառական և փոխհամաձայնողական քաղաքականություն խրախուսող խորհրդարանի ձևավորվելուն, ինչն առաջնահերթություն է նաև սույն հանձնաժողովի համար:

## **2.12.2. Քվեի կառուցվածքի և մանդատի հաշվարկման հետ կապված խնդիրներ**

### *Հիմնախնդիր*

Քվեի տեսակը (ballot structure)՝ այն է, թե ինչպես ընտրողները կարող են արտահայտել իրենց ընտրական նախապատվությունները, էականորեն պայմանավորում է ընտրություններում մրցող անհատների և ուժերի ռազմավարությունները՝ նպաստելով կամ խմբային (particulantistic benefits) կամ ծրագրային օգուտների (program benefits) նկատմամբ ուշադրություն դարձնելուն: Մասնավորապես ըստ քվեի կառուցվածքի կարելի է առանձնացնել 4 տիպ<sup>57</sup>:

Անհատ թեկնածուին տրվող քվեի պարագայում քաղաքացիները յուրաքանչյուր ընտրատարածքից ընտրում են մեկ անհատ ներկայացուցչի: 1990 թվականից սկսած մինչև 2012 թվականի ընտրությունները բոլոր մեծամասնական թեկնածուներն ընտրվել են այսպիսի քվեի միջոցով: Ակնհայտ է, որ այս պարագայում մրցող թեկնածուները շեշտադրում են հենց խմբային օգուտները (օրինակ այդ տարածքում գտնվող դպրոցի կամ ճանապարհի վերանորոգում):

Կրկնակի քվե (նաև հանդիպում է զուգահեռ, համատեղ կամ խառը անունով), երբ քաղաքացիներն օժտված են երկու տարբեր տեսակի քվեներով՝ թե՛ միամանդատ և թե՛ բազմամանդատ ընտրատարածքներում քվեարկելու հնարավորությամբ: Հայաստանում նման քվեներով քաղաքացիներն օժտված են եղել 1995 թվականից սկսած մինչև 2017 թվականը: Այս պարագայում ևս առկա են «խառը» դրոշմապատճառներ. թե՛ խմբային և թե՛ ծրագրային օգուտներն ուշադրության կենտրոնում են:

Նախապատվության քվե, երբ քաղաքացիները կարող են քվեի միջոցով նախապատվություն հայտնել ընտրել նույն կուսակցական ցուցակում եղած մի քանի թեկնածուներից: Բաց կուսակցական ցուցակներով բազմամանդատ ընտրատարածքներն այս քվեի օրինակ են, և Հայաստանում այս տեսակի քվեն կիրառվել է միայն 2017 թվականի ԱԺ ընտրությունների ժամանակ՝ ներդրված 13 տարածքային

<sup>56</sup> Հոդված 96.2 և Հոդված 98.5

<sup>57</sup> Norris, P. (2004), Electoral Engineering: Voting Rules and Political Behavior, Cambridge: Cambridge University Press, p.

ցուցակներով նախատեսված ընտրությունների պարագայում: Ակնհայտ է, որ այս դեպքում ևս անգամ նույն կուսակցության ցանկում գտնվող անհատները մրցակցում էին միմյանց հետ՝ շեշտադրելով խմբային օգուտները (օրինակ այդ տարածքում գտնվող դպրոցի կամ ճանապարհի վերանորոգում): Ավելին, այս տեսակի քվեն նպաստում էր, որ անհատ թեկնածուի նկատմամբ նախապատվությունը պարտադիր կերպով արտացոլվի նաև այդ թեկնածուի կուսակցության օգտին՝ զրկելով նախկինում առկա հնարավորությունից իրարից անկախ ընտրել թեկնածու տվյալ ընտրատարածքից և կուսակցությունը՝ համապետական մակարդակում: Քանի որ քաղաքացիների հիմնական նախապատվությունը հաճախ պայմանավորված է ոչ թե կուսակցության ծրագրի (օրինակ կրթական քաղաքականության առաջնահերթությունների), այլ մասնավոր թեկնածուի խոստումների (օրինակ կոնկրետ դպրոցի վերանորոգում) հետ, ապա տեսակի քվեն էլ ավելի բացասական է ազդում ծրագրային կուսակցությունների կայացման և ամրապնդման վրա, քան նախորդ խառը քվեի տեսակը և նպաստում է տեղական մակարդակի ազդեցություն ունեցող գործիչների ներկայացվածությանը՝ ի հաշիվ պակաս ներկայացվածություն ունեցող խմբերի:

Նախապատվության քվեի (որ ավելի հայտնի դարձավ որպես «ռեյտինգային» համակարգ) հետ կապված խնդիրներից է նաև այն հանգամանքը, որ այն լրացուցիչ բարդեցնում է ընտրակարգը՝ հատկապես, եթե հաշվի առնենք, որ տարածքային ընտրական ցուցակները համադրվում են համապետական ցուցակների և դրանց երկրորդ՝ ազգային փորքամասնությունների համար նախատեսված մասի հետ, իսկ արդյունքների ամփոփումը տեղի է ունենում բավական խրթին կանոններով (կայուն մեծամասնության հետ կապված արդեն քննարկված կարգավորումներ, տարածքային ցուցակների հիման վրա և ազգային փորքամասնության ներկայացուցիչների մանդատների հատկացման առանձին կարգավորումներ, արդյունքում խորհրդարանական տեղերի փոփոխվող թիվ, ավելի մեծ թվով ձայներ ստացած կուսակցությունների՝ խորհրդարանական տեղերը ավելացման նպաստող բանաձևեր և այլն<sup>58</sup>):

Մեկ այլ էական թերություն է այն, որ այս քվեն չի նպաստում պակաս ներկայացվածություն ունեցող սեռի ներկայացուցիչների ընտրությունը: 2017 թվականին տարածքային ցուցակներով ընտրված 49 պատգամավորներից միայն 2-ն է եղել իգական սեռի ներկայացուցիչ<sup>59</sup>: Ավելին՝ բաց ցուցակների պարագայում, ինչի կողմնակից են խորհրդարանական խմբակցությունների մի մասը, անհնար կդառնա քվոտաների միջոցով պակաս ներկայացված սեռի ներկայացուցչության ավելացումը, ինչը նույն և մնացյալ բոլոր խմբակցությունների մեկ այլ առաջարկ է<sup>60</sup>:

Տարածքային ցուցակների ընթացիկ կարգավորումը նաև որոշակի ռիսկեր է պարունակում փոքր թվով քվեներ ստացված ընտրատարածքներից թեկնածուների ներկայացուցչության ապահովման հետ կապված:

Ըստ քվեի կառուցվածքի, վերջին՝ չորրորդ տեսակը կուսակցական քվեն է, որի դեպքում քաղաքացիները կարող են միայն նախապատվություն հայտնել մեկ կուսակցության համար, իսկ կուսակցության ցուցակներում անունների հերթականությունը կանխորոշված է կուսակցությունների կողմից (փակ կամ ֆիքսված ցուցակներով քվե): Հայաստանում նման քվե խորհրդարանական ընտրությունների համամասնական ընտրակարգով առկա է եղել սկսած 1995 թվականից մինչև 2012 թվականի ընտրությունները, ընդ որում՝ խորհրդարանական մանդատների ընտրությունից ընտրություն աճող համամասնությամբ: Այս քվեի պարագայում է, որ կուսակցություններն ավելի շատ դրոշմված են կենտրոնանալ ծրագրային շահերի վրա (օրինակ՝ ոչ թե կոնկրետ ճանապարհի վերանորոգում, այլ ենթակառուցվածքների զարգացման համալիր քաղաքականության մշակում): Այս տեսակի քվեն նաև նպաստում է ավելի կազմակերպված կուսակցությունների և խմբակցությունների առաջացմանը:

<sup>58</sup> Ընտրական օրենսգիրք, հոդվածներ 83, 95, 96, 100

<sup>59</sup> Անհրաժեշտ է շեշտել, որ բաց ցուցակների կողմնակից խորհրդարանական այն կուսակցություններ պաշտպանում են նաև սեռերի պատշաճ ներկայացվածություն ապահովելու համար ցուցակներում քվոտաների սահմանումը, ինչը բնորոշ է հենց փակ/ֆիքսված կուսակցական ցուցակներով քվեին (մանրամասն տես՝ կուսակցական քվեի բաժինը):

<sup>60</sup> St' u օրինակ *Jones M & P. Navia* (1999) *Assessing the Effectiveness of Gender Quotas in Open-List proportional Representation Electoral Systems*, *Social Science Quarterly*, Vol. 80(2), pp. 341-355



Այս տեսակի քվեարկության ակնհայտ առավելություններից է նաև դրա պարզ, կանխատեսելի և հասկանալի լինելը: Ի տարբերություն բաց ցուցակների, որոնք մի կողմից ավելի են խորացնում պակաս ներկայացված խմբերի օտարումը խորհրդարանից, մյուս կողմից էապես բարդեցնում քվեների ու մանդատների հաշվարկը, ֆիքսված կամ փակ ցուցակներով կուսակցական քվեն քվտանների ներդրման և ձայների հեշտ հաշվարկի հնարավորություն է տալիս:

Այս տեսակի քննադատներն ընդգծում են, որ ի տարբերություն մնացյալ երեք քվեների (անհատական, խառը, նախապատվության քվե)՝ այս համակարգը պակասեցնում է տեղերից քաղաքական գործիչների և տեղական շահերի ներկայացվածությունը խորհրդարանում: Մակայն թարմ և մեծ թվով երկրներ ընդգրկող համեմատական վերլուծություններ<sup>61</sup> կասկածի տակ են դնում այս տեսակետը: Ավելին, հաշվի առնելով, որ Հայաստանում նախատեսված չեն տարածաշրջանային կուսակցություններ, իսկ գոյություն ունեցող ֆորմալ կարգավորումները, ինչպես նաև հանրապետության ունիտար ու բնակչության միատարր լինելու հանգամանքը նպաստում են, որ պարզ ընտրակարգով մրցակցող կուսակցությունները հնարավորինս լայն աշխարհագրությամբ ու հավասարաչափ կերպով իրենց կուսակցական ցուցակներում ներգրավեն հանրապետության տարբեր հատվածների ներկայացնող թեկնածուներ:

#### Առաջնահերթ լուծումներ

- Էապես վերանայել ԸՕ նախատեսված արդյունքների ամփոփման կարգավորումները<sup>62</sup>՝ սահմանելով պարզ համամասնական ընտրակարգ նախապես ֆիքսված (փակ) կուսակցական ցուցակների հիման վրա:

- Խորհրդարանում քաղաքական ուժերի ներկայացվածությունը խրախուսելու համար 1-ական տոկոսով նվազեցնել ընտրական արգելապատնեշները՝ սահմանելով 4 և 6 տոկոս համապատասխանաբար կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար՝ պահպանելով երրորդ առավելագույն թվով ձայներ ստացած կուսակցության կամ դաշինքին մանդատների բաշխման մասնակցելու դրույթը, այն դեպքում, երբ արգելապատնեշը հաղթահարել են միայն երկու քաղաքական ուժ:

- Քաղաքական ուժերի ընտրական մասնակցությունը խրախուսելու նպատակով նվազեցնել խորհրդարանական ընտրությունների համար նախատեսված ընտրական գրավի չափը մինչև 7.5 մլն դրամ, ինչպես նաև ավելացնել ընտրական գրավներից գոյացած՝ ԿԸՀ օգտագործման համար նախատեսված համամասնության չափը<sup>63</sup>:

- Տարբեր սեռերի առավել հավասարակշռված ներկայացվածությունը խրախուսելու անհրաժեշտությունից ելնելով ԱԺ ընտրակարգով նախատեսել փոփոխություններ՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ընտրական ցուցակի առաջին մասում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Նման կարգավորում նախատեսված էր նաև ընթացիկ ԸՕ-ով, որն ուժի մեջ պետք է մտներ 2022 թվականից հետո<sup>64</sup>: Սեռերի համամասնության միջև եղած խզման պակասեցումը ոչ միայն Հայաստանի միջազգային արտավորությունների մաս է, բայց նաև խորհրդարանական բոլոր խմբակցությունների միջև ձեռք բերված կոնսենսուսի արդյունք:

- Առանձին դրույթով պետք է նաև կարգավորվի խմբակցություններում ներկայացված յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների համամասնությունը՝ առնվազն 30 տոկոս:

<sup>61</sup> Օրինակ Andre A & Depauw S. (2018) Looking beyond the district: The representation of geographical sub-constituencies across Europe, International Political Science Review, Vol 39(2), pp. 256-272

<sup>62</sup> Հատկապես ԸՕ հոդվածներ 95 և 96

<sup>63</sup> Տես Հոդված 40.4: ԱԺ խմբակցությունները առաջարկում են մինչև 30 տոկոսի փոխարեն սահմանել մինչև 40 տոկոս, ինչը ընդունելի է հանձնաժողովի տեսակետից:

<sup>64</sup> ԸՕ, հոդված 83.4

- Ընտրակարգի պարզեցման, լրացուցիչ ցուցակներից ձերբազատման, գերիշխող կուսակցությանն այլ լրացուցիչ տեղեր չտալու, հետևաբար նաև համամասնության և ներկայացուցչության սկզբունքը հարգելու անհրաժեշտությունից ելնելով՝ փոփոխել նաև ազգային փոքրամասնությունների՝ խորհրդարանում ընտրվելու կարգը՝ սահմանելով պարզ քվոտա (յուրաքանչյուր ընտրական ցուցակի առաջին մասում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով քսանյակում (1-20, 1-40, 1-60 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) խրախուսելով մեկական ազգային փոքրամասնության ներկայացուցչի ներառում: Սակայն ազգային փոքրամասնության ներկայացուցչի՝ կուսակցական ցուցակում ընդգրկված չլինելը հիմք չպետք է լինի կուսակցության գրանցումը մերժելու համար: Փոխարենը այն պարագայում, երբ այդ կուսակցությունը կամ դաշինքի ստացված յուրաքանչյուր 20-րդ մանդատ կփոխանցվի արգելապատնեշը հաղթահարած այն ուժին, որը հաջորդ առավել շատ կողմ քվեներն է ստացել և ունի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ իր ցուցակում:

### **2.12.3. Երկրից դուրս գտնվողների քվեարկություն**

#### *Հիմնասխնդիր*

Մինչև 2007 թվականը ՀՀ ընտրական օրենսդրությունը նախատեսում էր Հայաստանից դուրս գտնվող քաղաքացիների համար քվեարկության կազմակերպում համապետական ընտրությունների ժամանակ: Այդ իրավունքն իրացվում էր դեսպանատներում և հյուպատոսարաններում և նախատեսված էր հաշվառված քաղաքացիների համար: Քվեարկության իրավունքն այս եղանակով իրացվում էր Հայաստանից դուրս գտնվող քաղաքացիների միայն փոքր համամասնությունը (մասնակցության թիվը տատանվել է մի քանի հազարից մինչև քսան հազար):

2007 թվականին այլ երկրների քաղաքացիների համար միաժամանակ նաև ՀՀ քաղաքացիություն ստանալու կարգավորումները սահմանելուն զուգահեռ ընտրական օրենսգրքում իրականացվեցին փոփոխություններ, որով արգելվեց Հայաստանից դուրս քվեարկության կազմակերպումը:

Այդուհանդերձ հարկ է ընդգծել, որ Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիները ոչ թե զրկվեցին քվեարկելու իրավունքից, այլ այդ իրավունքը արտերկրից իրացնելու հնարավորությունից: ՀՀ բոլոր քաղաքացիների անունները թե՛ 2007 թվականի փոփոխություններից հետո թե՛ այժմ էլ ներառված են ընտրողների ցուցակներում, և ցանկացածը կարող է քվեարկել՝ Հայաստանի տարածքում գտնվող իր հաշվառման համապատասխան տեղամասում:

Ընդհանրապես երկրից դուրս գտնվող քաղաքացիների համար արտերկրում քվեարկության կազմակերպումը յուրաքանչյուր պետության ընտրության նախապատվության հարցն է: Երկրից դուրս քաղաքացիների համար առանձին քվեարկության կազմակերպելը չի դիտարկվում որպես ժողովրդավարության պահանջ կամ լավագույն պրակտիկա, ոչ էլ դրա չկազմակերպումը չի դիտարկվում որպես մարդու իրավունքների ոտնահարում<sup>65</sup>:

2011 թվականին ընդունված ընտրական օրենսգրքով նախատեսվեց Հայաստանից դուրս գտնվող որոշ կոնկրետ խմբի անձանց համար ընտրական իրավունքի իրացում՝ համացանցային քվեարկության միջոցով: Չնայած այն հանգամանքին, որ քվեարկությունը կազմակերպվում էր համացանցի միջոցով, սակայն ԸՕ համապատասխան հոդվածի վերնագիրը՝ «Դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում քվեարկության կազմակերպումը», սխալ պատկերացում կարող էր ձևավորում, որ այն իրականացվում է մինչև 2007 թվական եղանակը իրականացված եղանակով: Ձևակերպման առումով խնդրահարույց է նաև հովածում նշված «Էլեկտրոնային եղանակ»-ը, քանի որ ԿԸՀ սահմանված կարգով խոսքն իրականում գնում է քվեարկության ինտերնետային կամ առցանց եղանակի մասին:

2016 թվականին ընդունված և այժմ գործող ընտրական օրենսգրքով վերանայվեցին այն չափանիշները, որոնց հիման վրա այդ իրավունքը տրամադրվում էր, սակայն ոչ քվեարկության եղանակը՝

<sup>65</sup> Report on out of country voting by European Commission for Democracy through law (Venice Commission), CDL-AD (2011)022

համացանցային քվեարկությունը:

Այդուհանդերձ, արտերկրում քվեարկության կազմակերպումը կապված է մի շարք խնդիրների հետ: Մասնավորապես՝

1. Արտերկրում գտնվող Հայաստանի քաղաքացիների միայն մի չնչին մասն է հյուպատոսական հաշվառման կանգնում: Հնարավոր է հետագայում այս խնդիրը լուծվի հյուպատոսական հաշվառման ընթացակարգերի հեշտացման ու հանրային իրազեկման արդյունքում:
2. Գործնականում անհնար է ապահովել արտերկրում թե՛ քարոզչության և թե՛ քվեարկության հանրային վերահսկողությունը: Եվ եթե քվեարկությունը կարող է կազմակերպվել պետության կողմից (քանի որ անցկացվում է դիվանագիտական ներկայացուցչություններում) ապա նախընտրական քարոզչությունը որևէ կերպ չի կարող կանոնակարգվել:
3. Տեխնիկապես գործնականում անհնար է Հայաստանի տարածքից դուրս քվեարկության կազմակերպումը՝ անվտանգության բոլոր բաղադրիչների ապահովմամբ (ինքնաստանձվող դրոշմանիշեր, էլեկտրոնային գրանցման սարքեր և այլն):

Այդ պատճառներով այս փուլում դիվանագիտական ներկայացուցչություններում քվեարկության ինստիտուտի վերականգնումն աննպատակահարմար է, սակայն այդ հարցին կարելի է անրադառնալ հետագայում:

### **2.13. ՏԻՄ ընտրակարգ**

#### *Հիմնախնդիր*

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրակարգին առնչվող խնդիրները, որոնք նաև վերահաստատվել են շահագրգիռ կողմերի թեմատիկ քննարկման արդյունքում, բավականին բազմաշերտ են և մեծապես փոխկապակցված են այլ հիմնախնդիրների՝ հատկապես համայնքների խոշորացման, կուսակցությունների կայացման ու քաղաքական պատասխանատվության ինստիտուտի զարգացման խնդրի, ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնման ու պատշաճ իրականացման և այդ իրականացման ընթացքում ծագող շահերի բախումների լրացուցիչ կարգավորման և այլ հարցերի հետ:

Դրանք ակնկալում են ՏԻՄ ընտրական համակարգի մի շարք առանցքային մոտեցումների վերանայում, մասնավորապես ենթադրելով՝

- համամասնական ընտրակարգով ձևավորվող ավագանի ունեցող համայնքների ցանկի ընդլայնում
- համամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուների նկատմամբ պահանջների վերանայում և, հատկապես, քաղաքացիական նախաձեռնություններին համամասնական ընտրություններին մասնակցության հնարավորության ընձեռում
- համամասնական ընտրակարգով նախատեսված անցողիկ շեմերի չափերի և բոնուսների վերանայում
- բոլոր համայնքներում համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունների ներդրում և այլն:

Արձանագրելով հանդերձ այս խնդիրների հետ կապված իրավական կարգավորումների հրատապ վերանայման կարևորությունը, հարկ է նկատել, որ սլոյալ պահին բացակայում է դրանց լուծման շուրջ քաղաքացիական հասարակության, քաղաքական միավորների և պետական կառույցների միջև համաձայնությունը: Հաշվի առնելով խնդիրների առավել մանրամասն հետազոտելու անհրաժեշտությունը և, ըստ այդմ, շտապողական մոտեցմանն առնչվող ռիսկերն ու աննպատակահարմարությունը, առաջարկվում է հետաձգել արմատական փոփոխությունները նոր գումարման ԱԺ ձևավորվելուց հետո,

բացառությամբ այն դեպքերի, երբ գոյություն ունեցող կարգավորումները հակասության մեջ են այն սկզբունքների և նպատակների հետ, որոնց շուրջ առկա է շահագրգիռ կողմերի լայն համաձայնությունը:

Հրատապ փոփոխության ենթակա կարգավորումներից ամենակարևորը Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների ձևավորման համար կիրառվող համամասնական ընտրակարգն է՝ այսպես կոչված «բոնուսների» վերացման նպատակով,<sup>66</sup> հիմք ընդունելով, որ ի տարբերություն սահմանադրական իրավակարգավորումներով պայմանավորված ԱԺ ընտրակարգի, ՏԻՄ ընտրակարգը ձևավորվում է գուտ ԸՕ հիմքով և հնարավոր է անել տվյալ փոփոխությունը: Ներկայացուցչական մարմնի ավելի հեշտ կառավարելիության ապահովման նպատակով ներդրված բոնուսային կարգավորումը պետք է վերանայվի: Ներկայացուցչական մարմնի կառուցվածքը (կազմը) պետք է արտացոլի ընտրողների նախապատվություններն ու նրանց կողմից կատարված ընտրության իրական և ներառական պատկերը՝ պարզ համամասնությամբ ընտրակարգով:

Նույն սկզբունքներից ելնելով՝ առաջարկվում է վերանայել Երևանի, Գյումրու և Վանաձորի համայնքների ավագանիների անցողիկ շեմի սահմանաչափը: Ներկայիս կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի (կուսակցության դեպքում՝ 6, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 8 տոկոս) փոխարեն առաջարկվում է սահմանել կուսակցության դեպքում՝ 4, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 6 տոկոս սահմանաչափը<sup>67</sup>՝ հետագայում չբացառելով այս սահմանաչափերի և, մասնավորապես, դրանց տարբերության վերանայման հնարավորությունը:

Առավել մեծ թվով կուսակցությունների և դաշինքների մասնակցությունը խրախուսելու համար նպատակահարմար է նաև վերանայել Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների մասնակցության ընտրագրավի սահմանաչափը<sup>68</sup>՝ նվազագույն աշխատավարձի 3.000-ապատիկ Երևանի դեպքում և 2000-ապատիկ Գյումրու և Վանաձորի: Հաշվի առնելով սույն քաղաքների բնակչության և տնտեսության զգալի տարբերությունները, առաջարկվում է նվազեցնել Գյումրու և Վանաձորի ընտրագրավի սահմանաչափը՝ մինչև 1500-ապատիկ:

Հանձնաժողովն առաջարկում է նաև սահմանել տարբեր սեռերի ներկայացվածության նվազագույն համամասնությունն ավագանու խմբակցություններում, այն սահմանելով 30 տոկոս:

Երկրորդելով խորհրդարանական բոլոր խմբակցությունների կողմից առաջարկված առաջարկը՝ հանձնաժողովը նպատակահարմար է գտնում հնարավորություն տալ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրություններին գրանցված կուսակցությունների և դաշինքների նախընտրական ծրագրերի հրապարակումը ԿԸՀ կայքում՝ ընդ որում այդ ծրագրերի ներկայացումը պետք է տեղի ունենա փաստաթղթերի հանձնման ժամանակ՝ կամավոր հիմքով, իսկ ծրագրի չներկայացնելը հիմք չի կարող լինել թեկնածուի գրանցումը մերժելու համար:

Վերը նկարագրված բովանդակային փոփոխություններ ներկայացնող առաջարկներից գատ հանձնաժողովը կարևորում է, որ նոր ձևավորված ԱԺ-ն առանց հապաղելու դիտարկի ՏԻՄ ընտրակարգի հետ կապված առանցքային կարգավորումների փոփոխությունները:

### *Առաջնահերթ լուծումներ*

<sup>66</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 141, մաս 5

<sup>67</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 141, մաս 3

<sup>68</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 130, մաս 3, կետ 7

- Վերացնել Երևանի, Գյումրու և Վանաձորի համայնքների ավագանիների ձևավորման վրա տարածվող համամասնական ընտրակարգի «բռնումների» համակարգը<sup>69</sup>:

- Իջեցնել Երևանի, Գյումրու և Վանաձորի համայնքների ավագանիների անցողիկ շեմի սահմանաչափը կուսակցության դեպքում՝ 6-ից 4, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում 8-ից՝ 6 տոկոսի:

- Վերանայել Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրությունների մասնակցության ընտրագրավի սահմանաչափը<sup>70</sup>՝ նվազեցնել մինչև 1500-ապատիկ Գյումրու և Վանաձորի:

- Ավագանիների կազմում կանանց ներկայացվածությունը սահմանել 30 տոկոս:

---

<sup>69</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 141, մաս 5

<sup>70</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 130, մաս 3, կետ 7